

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԻ»-ՀԿ



## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՄԱԶՈՐԱՅԻՆ ՄԱՐՏԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՄԱՅՈՐ ԳՐԻԳՈՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԼԼԱԴԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԶՈՎՔԻ ԳԱԳԻԿ ՇԱՀԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԵՐԵՎԱՆ 2023թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածական մաս.....	3
1. Համագորային մարտը՝ համագորային գորամիավորումների և գորամասերի մարտավարության առարկա.....	5
2. Համագորային մարտի ուժերն ու միջոցները.....	8
3. Համագորային մարտի էությունն ու դրան բնորոշ գծերը.....	31
4. Ժաանակակից համագորային մարտի սկզբունքները.....	40
Հավելված1.....	50
Եզրափակիչ մաս.....	52
Գրականություն.....	53

*«Մարդը, որը ռազմիկ է, պարտավոր է գիտակցել իր բարձր դերը, իր իշխանությունը և մեծությունը սպառազինության նկատմամբ: Դրա գիտակցումը պետք է դրթի նրան՝ գիտելիքների, ունակությունների և հմտությունների կատարելագործ-մանը:*

*Երիտասարդ զինժառայողներին պետք է դաստիարակել այն հոգեբանությամբ, որ սիրեն զենքը և սպառազինությունը, որը պարտավոր են կառավարել:*

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գաշտային առճակատման քաղաքականությունից փոխըմբռնման և համագործակցության քաղաքականության հետագա անցման համար պայքարը, որն անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) արտաքին քաղաքական գործունեության հիմնական ուղղությունն է, ստեղծում է իրական նախադրյալներ Եվրոպայում և աշխարհի այլ տարածաշրջաններում ռազմական ոլորտում հետագա դրական փոփոխությունների համար, նպաստում է սպառազինությունների մրցավազքի սանձահարմանը, ռազմական սպառնալիքի նվազեցմանն ու համաշխարհային համագործակցության զարգացմանը:

Սակայն, չնայած աշխարհում ծավալված ակտիվ զինաթափման գործընթացին ու զինված ուժերի պլանավորվող կրճատմանը, ԱՄՆ-ն չի հրաժարվել ԱՊՀ-ի նկատմամբ ռազմական գերակշռության հասնելուց, ՆԱՏՕ-ի երկրներում շարունակվում է գորքերը սովորական զենքի նոր սերնդին փոխադրելու լայնամասշտաբ ծրագրի իրագործումը: Այդ ծրագիրը նախատեսում է գորքերում ճշգրիտ զենքի զանգվածային մատակարարումներ և հակառակորդին ծանր հարվածներ հասցնելու համար նրա երկրորդ էշելոնները, ռեզերվները ոչնչացնելու և առջևում գործող գորքերի ջանքերի ընդլայնումը խափանելու համար դրա լայն կիրառությունն օպերացիաներում:

Ստեղծված պայմաններում ԱՊՀ-ն համակողմանիորեն գնահատում է իրապես գոյություն ունեցող ռազմական վտանգը: Պետական իշխանության բարձրագույն մարմինների և համագործակցության զինված ուժերի ղեկավարության հատուկ հոգսը բանակի ու նավատորմի ուժերի մարտական հզորությունն ու մարտական պատրաստականությունը պատերազմի կանխումն ու նախահարձակման երաշխավորված հետմղումն ապահովող մակարդակի վրա պահելն է: Քանի դեռ ռազմական սպառնալիքը վերացված չէ, Հայրենիքի պաշտպանության սահմանադրական պարտականությունների կատարումը կար և մնում է մեր ժողովրդի և պետությունների համագործակցության կարևորագույն խնդիրներից մեկը:

Գործող ռազմական հայեցակարգի դրույթների համաձայն ԱՊՀ-ի դեմ պատերազմ սանձազերծելու դեպքում միավորված զինված ուժերի գլխավոր խնդիրը կլինի այն, որ հետ մղեն նախահարձակի հատկացումը, կասեցնեն նրա զինված ուժերի ներխուժումը և ապահովեն դրանց խոցումը: Այդ խնդիրը լուծելու գործում մեծ դեր կխաղան ժամանակակից մարտավարությանը տիրապետող գորքերի մարտական գործողությունները:

Մարտավարության ուսուցմանը, մարտը նախապատրաստելուց և վարելուց սպաների ռազմատեսական գիտելիքների ընդլայնումը, նրանց կողմից կանոնադրական դրույթներ խոր յուրացմանն ու գործնականում դրանց ստեղծագործական կիրառումը նպաստելու համար էլ նախատեսված է «Համագորային

գորամիավորումների ու գորամասերի մարտավարություն: Դիվիզիայի (գնդի) պաշտպանությունը դասագիրքը: Այն մշակել են ցամաքային զորքերի մարտական կանոնադրության (մաս 1-ին) և այլ գործող պաշտոնական ձեռնարկների հիման վրա՝ հաշվի առնելով մարտ վարելու վերաբերյալ հնարավոր հակառակորդների հայացքները, ինչպես նաև սպառազինության ու տեխնիկայի զարգացման մոտակա հեռանկարները և մարտի բնույթի ու այն վարելու եղանակների փոփոխությունների վրա դրանց հնարավոր ազդեցությունը:

Համագորային գորամիավորումների ու գորամասերի մարտավարության հիմնադրույթները քննարկում են հակառակորդի կողմից «օդացամաքային օպերացիան ըբոնման իրականացման պայմաններում անցկացվող առաջին պաշտպանական ու հետագա օպերացիաներում համագորային մարտին համապատասխան՝ նրանց կողմից զանգվածային խոցման զենք կիրառելու մշտական սպառնալիքի դեպքում գերձզգրիտ զենք կիրառելով:

Ռեֆերատում շարադրված են համագորային մարտի ուժերն ու միջոցները, դրա էությունը, բնորոշ գծերն ու սկզբունքները, ինչպես նաև համագորային մարտի տեսակների դասակարգումը, բացահայտված են զորքերի կառավարման, անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստության հարցերը, պաշտպանության հիմունքները, դրա նախապատրաստումը, այդ թվում նաև խաղաղ ժամանակ և տարբեր պայմաններում վարումը, ինչպես նաև տրված են մարտի համակողմանի ապահովման բոլոր տեսակների հիմունքները: Զորաշարժային պաշտպանության և գիշերային պաշտպանության առանձնահատկությունները քաղաքի, ամրացած շրջանի, ծովափի պաշտպանությունը, հատուկ պայմաններում նաև նահանջը:

## **1. Համագորային մարտը՝ համագորային գորամիավորումների և գորամասերի մարտավարության առարկա**

Հայտնի է, որ ռազմարվեստը որպես գիտական տեսություն բաժանվում է երեք բաղադրամասերի՝ ռազմավարություն, օպերատիվ արվեստ և մարտավարություն: Նման բաժանումը պայմանավորված է տարբեր մասշտաբների զինված պայքարի վարման յուրօրինակ առանձնահատկություններով: Այն ռազմարվեստի յուրաքանչյուր մասին թույլատրում է կոնկրետորեն և նպատակասլացիորեն հետազոտել դրա առարկային վերաբերող երևույթների բնագավառը: Ռազմավարությունն զբաղվում է ամբողջությամբ ռազմական հայեցակարգի պաշտպանողական ուղղվածության լույսի ներքո ռազմավարական օպերացիաների և պատերազմի նախապատրաստման ու վարման հարցերով, օպերատիվ արվեստը՝ օպերացիաների նախապատրաստման ու վարման տեսությամբ ու պրակտիկայով, մարտավարությունը՝ զորքերի, օդուծի և նավատորմի մարտավարական գործողությունների հիմնական ձևը համարվող մարտով:

Մարտավարությունը ցամաքում, օդում և ծովում զինված ուժերի տարբեր տեսակների, զորատեսակների (ուժերի) և հատուկ զորքերի գորամիավորումների, գորամասերի (նավերի) ու ստորաբաժանումների կողմից մարտը նախապատրաստելու ու վարելու տեսությունն ու պրակտիկան է: Այն ստորաբաժանվում է ընդհանուր մարտավարության և զինված ուժերի տեսակների, զորատեսակների ու հատուկ զորքերի մարտավարության: Այդ դեպքում ընդհանուր մարտավարությունը կարելի է բաժանել համագորային գորամիավորումների, գորամասերի և ստորաբաժանումների մարտավարությունների:

Ընդհանուր մարտավարություն, այդ թվում համագորային գորամիավորումների ու գորամասերի մարտավարության առարկան համագորային մարտն է և դրա հետ կապված զինված ուժերի տեսակների զորատեսակների ու հատուկ գորամիավորումների, գորամասերի ու ստորաբաժանումների մարտական գործունեությունը: Դրան համապատասխան ընդհանուր մարտավարությունն ուսումնասիրում է համագորային մարտի օրինաչափությունները և մշակում է զինված ուժերի տարբեր տեսակների, զորատեսակների ու հատուկ զորքերի գորամիավորումների գորամասերի ու ստորաբաժանումների համատեղ ջանքերով այն նախապատրաստելու ու վարելու հանձնարարականներ. ընդհանուր մարտավարության հիմքը ցամաքային զորքերի, ամենից առաջ դրանց գորամիավորումների ու գորամասերի մարտավարությունն է:

Զինված ուժերի տեսակների, զորատեսակների և հատուկ զորքերի մարտավարությունը մշակում է զինված ուժերի այս կամ այն տեսակի, զորատեսակի և հատուկ զորքերի տեսակի գորամիավորումների, գորամասերի և ստորաբաժանումների՝ համագորային ինքնուրույն մարտական կիրառության յուրահատուկ հարցերը:

Ընդհանուր մարտավարությունը և զինված ուժերի, տեսակների, զորատեսակների ու հատուկ զորքերի մարտավարությունը օգնում են սերտ փոխկապակցության մեջ: Ընդհանուր մարտավարությունը որոշում է զինված ուժերի տեսակների, զորատեսակների և հատուկ խնդիրները համագորային մարտում, այն որ վարելու ընթացքում դրանց համատեղ օգտագործման կարգն ու եղանակները և դրանով իսկ ազդում է դրանց մարտավարության զարգացման վրա: Իր հերթին , զորատեսակների, հատուկ զորքերի և զինված ուժերի տեսակների մարտավարությունում նոր զենքի ներդրմամբ տեղի ունեցող փոփոխությունները որոշակի ազդեցություն են թողնում ընդհանուր մարտավարության զարգացման վրա, պահանջում են համագորային մարտը վարելու և դրանում զինված ուժերի տեսակների, զորատեսակների ու հատուկ զորքերի զորամասերն ու ստորաբաժանումներն օգտագործելու վերաբերյալ հանձնարարականների կատարելագործում:

Մարտավարությունը, այդ թվում համագորային զորամիավորումների ու զորամասերի մարտավարությունը, ունի երկու տեսանկյուն՝ տեսական ու գործնական:

Մարտավարության տեսությունն ուսումնասիրում է ժամանակակից մարտի բովանդակությունն ու բնույթը, բացահայտում է այն վարելու սկզբունքներն ու օրինաչափությունները, ուսումնասիրում է մարտավարական զորային կազմավորումների մարտական հատկություններն ու հնարավորությունները, մշակում է մարտը նախապատրաստելու և վարելու եղանակները: Մարտավարության տեսական դրույթներն արտացոլում են գտել կանոնադրություններում, հրահանգներում, դասագրքերում, ուսումնական ձեռնարկներում, այլ ռազմատեսական աշխատություններում: Մարտավարության տեսությանը ներկայացվող պահանջն այն է, որ այն գերազանցի գործնականին, դրա համար ճանապարհի հարթի, բացահայտի զարգացման հնարավոր ուղիները և դրանով իսկ արագացնի համագորային մարտը նախապատրաստելու և վարելու եղանակների կատարելագործումը:

Մարտավարության պրակտիկան ընդգրկում է հրամանատարների, շտաբների և զորքերի մարտը նախապատրաստելու ու վարելու գործունեությունը: Այն ներառում է իրավիճակի տվյալների հավաքումն ու ուսումնասիրումը, որոշումների ընդունումն ու խնդիրները ենթականերին հասցնելը, հակառակորդի կրակախոցման ուժերի ու միջոցների փոխգործողության կազմակերպումը, մարտի պլանավորումը, մարտական խնդիրների կատարմանը զորամիավորման (զորամասի, ստորաբաժանման) նախապատրաստումը, այն վարելու ընթացքում զորամասերի ու ստորաբաժանումների ապահովումը:

Մարտավարության տեսությունն ու պրակտիկան սերտորեն փոխկապակցված են և լրացնում են մեկը մյուսին. տեսությունը հիմնվում է պրակտիկայի վրա և լուսավորում է դրա ճանապարհը, պրակտիկան հիմնվում է

տեսության վրա և կյանքից ու գորամիավորումների, գորամասերի ու ստորաբաժանումների մարտական գործունեությունից դրան նյութեր է տալիս նոր տեսական ընդհանրացումների համար:

Մարտավարությունն անխզելիորեն կապված է ռազմարվեստի մյուս բաղադրամասերի հետ: Դրա տեսությունն ու պրակտիկան ենթարկվում են ռազմավարության և օպերատիվ արվեստի շահերին, ղեկավարվում են դրանց պահանջներով, այն հանդես է գալիս որպես օպերատիվ պլանների անմիջական կատարող: Իր հերթին, մարտավարությունը, նոր զենքի ու տեխնիկայի ներդրման ազդեցությամբ արագորեն փոխվելով, ինքը լուրջ ներգործություն է թողնում օպերատիվ արվեստի վրա, իսկ դրա միջոցով էլ ռազմավարության վրա:

Հզոր ռազմավարական և օպերատիվ հրթիռամիջուկային միջոցների հայտնվելը ռազմարվեստի բաղադրամասերի հարաբերակցությունն ու դերը փոխեց հոգուտ ռազմարվեստի և օպերատիվ արվեստի, որոնք ժամանակակից պայմաններում ոչ միայն որոշում են մարտավարության խնդիրները, այլև իրենց միջոցներով հաճախակի վճռական ազդեցություն են թողնում դրանց կատարման վրա: Իր հերթին, մարտավարությունն էլ կարևոր դեր կխաղա մարտավարական օղակի ուժերով ու միջոցներով հակառակորդին ջախջախելու կամ նրա ջախջախումն ավարտելու և տեղանքի կարևոր շրջաններին տիրելու (դրանք պահպանելու) ճանապարհով օպերատիվ արվեստի խնդիրները կատարելու գործում, առանց որի վերջնական հաղթանակի հասնելը հնարավոր չէ, ընդ որում մարտավարության դերը միջուկային պատերազմում հաստատուն չի մնում: Այն փոփոխվում է ըստ պատերազմի ժամանակաշրջանների՝ կախված զինված պայքարի միջոցների կիրառման մասշտաբներից: Մարտավարության դերը մեծ է հատկապես միայն սովորական զենքի կիրառմամբ մարտական գործողություններում. օպերատիվ հաջողությունները կարելի է ձեռք բերել ամենից առաջ որպես մարտավարական հաջողությունների:

Մարտավարությունը ռազմարվեստի ամենադինամիկ բնագավառն է, քանի որ այն սերտորեն կապված է սպառազինության ու տեխնիկայի հետ. սպառազինության ու տեխնիկայի կատարելագործմանը զուգընթաց փոխվում է նաև մարտավարությունը:

Մարտավարությունն առավել մոտիկ է գորքերի գործնական գործունեությանը: Դրանով զբաղվում են զինված ուժերի ամբողջ անձնակազմն ու առավել բազմաթիվ զորակազմավորումները՝ գորամիավորումները, գորամասերն ու ստորաբաժանումները, որոնց սպաները ակտիվորեն մասնակցում են մարտավարական հանձնարարականների ոչ միայն յուրացմանը, այլև հետագա կատարելագործմանը: Մարտավարության զարգացման մակարդակը, սպաների, շտաբների և գորքերի մարտավարական պատրաստության որակը հաղթանակի հասնելու կարևոր գործոններն են: Դրանով էլ բացատրվում է հատկապես պահանջկոտ և դրա հետ մեկտեղ հոգատար վերաբերմունքը մարտավարության,

բոլոր կատեգորիաների սպաների ու գորքերի մարտավարական արվեստի նկատմամբ:

## **2. Համագորային մարտի ուժերն ու միջոցները**

Ժամանակակից համագորային մարտում լայն կիրառություն են գտել զենքի, մարտական տեխնիկայի, կառավարման ու ապահովման միջոցների տարբեր տեսակներ ու համակարգեր:

Միջուկային զենքը կիրառելու դեպքում այն համագորային մարտում հակառակորդին խոցելու առավել հզոր միջոցն է: Դրա կիրառությունը թույլ կտա կարճ ժամկետներում բարձր արդյունավետությամբ ու հուսալիությամբ ոչնչացնել հակառակորդի միջուկային միջոցները, կենդանի ուժը, մարտական տեխնիկան ու նյութական պաշարները, ակնթարթորեն շարքից հանել ամբողջ ստորաբաժանումներ, զորամասեր ու այլ օբյեկտներ, ինչպես նաև ավերել նրա ռազմական ու արդյունաբերական օբյեկտները, ստեղծել զանգվածային ավերածությունների շրջաններ և ռադիոակտիվ վարակման գոտիներ, հակառակորդի բնակչության և գորքերի անձնակազմի վրա թողնել ուժեղ բարոյական և հոգեբանական ներգործություն: Միջուկային զենքը ներառում է միջուկային զինամթերքների բոլոր տեսակներն ու դրանք նշանակետերին հասցնելու միջոցները:

Կախված լիցքի կարգից՝ տարբերվում են ատոմային և ջերմամիջուկային (սովորական, նեյտրոնային) զինամթերքներ:

Ըստ տրոտիլային համարժեքով տոննաներով (տ) բնութագրվող պայթյունի հզորության միջուկային զինամթերքները պայմանականորեն բաժանում են. գերփոքր՝ մինչև 1 հազ.տ., փոքր՝ 1-ից մինչև 10 հազ. տ., միջին՝ 10-ից մինչև 100 հազ. տ., խոշոր՝ 100 հազ տ-ից մինչև 1 մլն.տ., գերխոշոր՝ 1 մլն տ-ից բարձր զինամթերքների: Համագորային միավորումները կարող են կիրառել փոքր և միջին հզորության միջուկային զինամթերքներ:

Միջուկային զենքը կիրառում են հանկարծակի, կենտրոնացված և այլ խոցամիջոցների հետ զուգակցմամբ, սովորաբար գլխավոր ուղղության վրա հակառակորդի գորքերի հարվածող խմբավորումներն ու կարևորագույն օբյեկտները (նշանակետերը) խոցելու համար: Այդ դեպքում կարող են հասցնել կենտրոնացած, խմբային ու միահար հարվածներ:

**Կենտրոնացված միջուկային հարվածը** հասցնում են միաժամանակ մեծ քանակությամբ միջուկային զինամթերքներով՝ հակառակորդի գորքերի մեկ խոշոր խմբավորում կամ մի քանի խմբավորումներ և այլ կարևոր օբյեկտներ խոցելու համար: Կենտրոնացված միջուկային հարված հասցնելուն կարող են մասնակցել հրթիռային գորքերը, օդուժն ու նավատորմի ուժերը:

**Խմբային միջուկային հարվածը** հասցնում են միաժամանակ մի քանի միջուկային զինամթերքներով՝ մեկ կարևոր օբյեկտ կամ օբյեկտների խումբ խոցելու համար:



**Մի ա հ ա ր մ ի ջ ու կ ա յ ի ն հ ա ր վ ա ծ ը** հասցնում են միջուկային զինամթերքով՝ հակառակորդի մեկ օբյեկտը կամ նշանակետերի խումբը խոցելու համար:

Մոտոհրաձգային և տանկային դիվիզիաներն իրենց առաջադրված մարտական խնդիրները կատարելիս կօգտագործեն դրանց գործողությունների ուղղությունների վրա ավագ պետի միջոցներով հասցրած միահար և խմբային միջուկային հարվածների արդյունքները:

Կախված միջուկային զենքի կիրառմամբ լուծվող խնդիրներից, խոցման օբյեկտների տեսակից ու գտնվելու տեղից, զորքերի գործողությունների բնույթից և այլ պայմաններից՝ միջուկային պայթյունները կարելի է իրականացնել օդում, գետնի մակերևույթին ու գետնի տակ: Դրան համապատասխան միջուկային զենքով հակառակորդի օբյեկտները կարելի է խոցել օդային, վերգետնյա և ստորգետնյա միջուկային պայթյուններով:

Օդային միջուկային պայթյունները կիրառում են այն դեպքերում, երբ իրավիճակի պայմաններով անթույլատրելի է տեղանքի ուժեղ ռադիոակտիվ վարակումը՝ կապված այնտեղ սեփական զորքերի առաջիկա գործողությունների հետ: Օդային պայթյունները կարող են լինել բարձր և ցածր: Բարձր միջուկային պայթյունները կիրառում են թաքստոցներից դուրս և բաց ամրաշին կառույցներում գտնվող հակառակորդի զորքի նկատմամբ, իսկ ցածրերը՝ ամուր ամրաշինական կառույցներում գտնվող զորքերը խոցելու համար: Այդ դեպքում տեղանքի ուժեղ ռադիոակտիվ վարակման առաջանում է պայթյունից հետո առաջին ժամերին, ցածր օդային պայթյունի էպիկենտրոնի մոտ, բարձր պայթյունի դեպքում կուտակումը նույնիսկ էպիկենտրոնի մոտ աննշան է:

Վերգետնյա միջուկային պայթյունները կիրառում են ամուր ամրաշինական կառույցներ ունեցող օբյեկտների նկատմամբ, երբ իրավիճակի պայմաններով կարևոր նշանակետերի ոչնչացման հետ միաժամանակ անհրաժեշտ է ստեղծել տեղանքի ուժեղ ռադիոակտիվ վարակում պայթյունի շրջանում և ռադիոակտիվ ամպի շարժման ճանապարհին՝ հակառակորդի զորքերի զորաշարժը խափանելու կամ սահմանափակելու համար:

Ստորգետնյա միջուկային պայթյունները կիրառում են տեղանքի ուժեղ ռադիոակտիվ վարակում ստեղծելու և հատկապես ստորգետնյա կառույցներն ավերելու համար:

Մարտական գործողությունների ժամանակ միջուկային զինամթերքները նշանակետերին հասցնելու միջոցներն են հրթիռային զորքերի ու օդուժի զորամիավորումների ու զորամասերի արձակման կայանքները՝ դրա կրող ինքնաթիռները: Էլ ավելի է աճում ոչ միայն օպերատիվ մասշտաբի հրթիռային զորքերի նշանակությունը, այլև ճակատային օդուժի նշանակությունը մասշտաբում միջուկային զինամթերք կիրառելիս, ինչը պահանջում է առաջին հերթին օդուժի հետ մոտոհրաձգային և տանկային զորամիավորումների սերտ փոխգործողությունների

պահպանում ի շահ այդ զենքի կիրառման արդյունքների արդյունավետ օգտագործման:

Մի շարք երկրների համագորային միավորումներում մարտավարական միջուկային զենք կիրառելու հիմնական միջոցը 0,08-ից մինչև 10 հազ. տ և 20-30կմ հրաձգության հեռավորությամբ միջուկային զինամթերքներով 155մմ և 203,2մմ տրամաչափի հրազենն է:

Դուրսբերման միջոցների, միջուկային զինամթերքի հզորության, պայթյունի տեսակի ու բարձրության ընտրությունը կախված է օբյեկտի կարևորությունից, դրա խոցման անհրաժեշտ աստիճանից, գործունեության բնույթից և օբյեկտի պաշտպանվածության աստիճանից, դրա հեռացումից, չափից, շարժունակությունից, հակառակորդի հակաօդային պաշտպանության արդյունավետությունից, սեփական զորքերի խնդիրներից, ինչպես նաև ֆիզիկաաշխարհագրական և օդերևութաբանական պայմաններից: Այդ դեպքում այն օբյեկտները, որոնց նկատմամբ կիրառում են միջուկային զենք, պետք է ընտրել միջուկային պայթյունի խոցող գործոնների ներգործությունից սեփական զորքերի անվտանգությունն ապահովող հեռավորության վրա:

Մարտի նյութական բազան փոփոխելու կարևոր գործոնը տրված խոցող գործոններով միջուկային զինամթերքի հայտնվելն է: Դրանից են ամենից առաջ իրենցից 0,5-ից մինչև 2 կտ հզորությամբ գերմիջուկային լիցքեր ներկայացնող նեյտրոնային զինամթերքները: Այդպիսի զինամթերքների հիմնական խոցող գործոնը թափանցող ճառագայթումն է, որի գլխավոր բաղադրիչն արագ նեյտրոնների հոսքն է: Թափանցող ճառագայթմանը բաժին է ընկնում պայթյունի էներգիայի մինչև 25%-ն ու ավելին (սովորական միջուկային զինամթերքների 5%-ի փոխարեն):

Նեյտրոնային զինամթերքի պայթյունի ժամանակ թափանցող ճառագայթմամբ անձնակազմի խոցման գոտիների շառավիղներն զգալիորեն մեծ են հարվածային ալիքով և լուսային ճառագայթմամբ խոցման գոտիների շառավիղներից: Մարդկանց վրա խոցող ազդեցությամբ 1 հազ. տ հզորությամբ նեյտրոնային զինամթերքի պայթյունը համարժեք է 10-12 հազ. տ հզորությամբ ատոմային զինամթերքի պայթյունին: Նեյտրոնային զինամթերքի պայթյունն առաջացնում է նաև բարձր մակադված ճառագայթում բնահողում, սպառազինության և տեխնիկայի նյութերում, պարենում և ջրում, որոնք դառնում են անձնակազմի խոցման աղբյուր: Ռադիոէլեկտրոնային ապարատության, էլեկտրատեխնիկական սարքավորման և օպտիկական սարքերի նեյտրոնային հոսքով զանգվածային վնասվածքները կարող են հանգեցնել ուժերի ու միջոցների կառավարման խախտման: Հարվածային ալիքի ներգործությունից սպառազինության ու տեխնիկայի մեխանիկական վնասվածքների շառավիղները կլինեն աննշան:

Միջուկային զինամթերքների նոր սերնդի համար բնորոշ են դրանց կառուցման ավելի կատարյալ սկզբունքների կիրառությունը, հզորության փոխարկիչներով զինամթերքների մատակարարումը, տանկերում, հետևակի

մարտական մեքենաներում և այլ տեխնիկայում տեղաբաշխված անձնակազմի շարքից դուրս գալու 25-40%-ով ավելացման նույն հզորության ատոմային զինամթերքների համեմատությամբ:

Մարտական գործողություններում միջուկային զենքի կիրառումն ուժեղ բարոյահոգեբանական ներգործություն կթողնի անձնակազմի վրա. ռադիոակտիվ վարակման աննշան վտանգը. զանգվածային կորուստները, ավերածություններն ու հրդեհները, օրգանիզմի ֆիզիոլոգիական գործառույթների խախտումը, շրջապատողների մեջ ճառագայթային հիվանդության հայտվելու հատկանիշները բացասականորեն են ազդում մարդկանց վարքի, գորամասերի ու ստորաբաժանումների մարտավարության վիճակի վրա:

Միջուկային զենքի կիրառումն էական ազդեցություն է թողնում համագորային մարտի բնույթի և դա վարելու եղանակների վրա. մարտը դառնում է առավել վճռական, դինամիկ, օջախային կողմերի մարտակարգերի մեջ մեծ փոխադարձ սեպումներով. մարտ վարելու ընթացքում աճում են համագորային գորամասերի ու ստորաբաժանումների ինքնուրույնությունն ու դերը, բարձրանում են դրանց կենսունակության և մարտական կայունության ապահովմանը ներկայացվող պահանջները, ինչպես մարտը նախապատրաստելիս, այնպես էլ այն վարելու ընթացքում: Այս ամենը պահանջում է ավելի օպերատիվ բացահայտում և հակառակորդի միջուկային զենքի մեծ քանակի ոչնչացում, մարտական գործողություններում սեփական միջուկային զենքի հմուտ կիրառում, սեփական միջուկային հարվածների արդյունքների ժամանակին օգտագործում, առաջացած խնդիրները կատարելիս գորքերի գործելու եղանակների կատարելագործում, գորամասերի մարտունակության արագ վերականգնում և ուժերի ու միջոցների սահմանափակ կազմով մարտը վարելու արվեստի տիրապետում:

**Սովորական զենք** են հրետանային, զենիթային, օդուժային, հրաձգային և ինժեներական զինամթերքներ, ինչպես նաև սովորական հանդերձանքով հրթիռներ, հրկիզիչ զինամթերքներ, հրախառնուրդների և ծավալային պայթյունի զինամթերքներ կիրառող բոլոր կրակային ու հարվածային միջոցները: Սովորական զենքը կարելի է կիրառել ինքնուրույնաբար և միջուկային զենքի հետ զուգակցմամբ՝ հակառակորդի կենդանի ուժն ու տեխնիկան ոչնչացնելու համար, ինչպես նաև տարբեր օբյեկտներ ավերելու և ոչնչացնելու համար:

Սովորական զենքի զարգացման գործում նույնպես տեղի են ունեցել էական որակական փոփոխություններ. հայտնվել են նոր, ավելի կատարյալ տանկեր, ՀՄՄ-ներ, հրետանի, ՀՕՊ միջոցներ, ինքնաթիռներ, ուղղաթիռներ, գերձշգրիտ զենքի, ռադիոէլեկտրոնային ճնշման և տեղանքի հեռավորական ականապատման համակարգեր:

Սովորական զենքի զարգացման մեջ գլխավոր ուղղությունը դարձավ գերձշգրիտ զենքի (ԳՃԶ) ստեղծումը:

Գերձզգրիտ զենքը թույլատրում է մեկ-երկու կրակոցով խոցել տարբեր նշանակետեր հրաձգության հեռավորության ամբողջ ընդգրկույթում, օրվա ցանկացած պահին, ցանկացած եղանակային պայմանների դեպքում: Դրան հասնում են հետախուզության ավտոմատացված միջոցների բարձր արագագործությամբ, տեխնիկական կատարելագործմամբ և կառավարվող կամ ինքնակառավարվող զինամթերքների ու հրթիռների կիրառմամբ:

Ցամաքային զորքերի ԳՃԶ-երի առավել արդյունավետ տեսակներ են դառնում հետախուզահարվածային և հետախուզակրակային համալիրները (ՀՀՀ-ներն ու ՀԿՀ-ները), որոնցում հետախուզության գերձզգրիտ միջոցներն ու խոցման միջոցները միավորված են կառավարման ավտոմատացված համակարգով, ինչը թույլատրում է հետախուզության տվյալներն օգտագործել ժամանակի՝ իրականին մոտ մասշտաբով և օբյեկտները խոցել հաշված բոպեներում:

Օրինակ՝ ԱՄՆ-ում «Լանա-2 ե կվ-ի բազայի վրա ստեղծում են կորպուսային ՀՀՀ մինչև 250կմ արձակման հերավորությամբ, ինչպես նաև ՀԶԿՌՀ MLRS բազայի վրա դիվիզիոնային ՀՀՀ և կորպուսային ՀՀՀ համապատասխանաբար 70 և 150կմ արձակման հեռավորություններով: ՀՀՀ-ում օգտագործվող հրթիռների մարտական մասերը հանդերձված են մեկ հրթիռով մինչև 10 տանկ ( տիպային նշանակետը տանկային վաշտն է) խոցել թույլատրող ինքնանշանառու մարտական տարրերով: «Հետախուզություն- խոցումե պարբերաշրջանի ժամանակը 3-4ր է:

Հակամարտկոցային պայքարի համար ստեղծվող ՀԿՀ միդ-երը (տդ-երը) ենթակարմիր և ռադիոկառավարման ԻՌԻԳ-երով արկեր կիրառող ՀԶԿՌՀ դիվիզիոնը կամ 152-մմ ԻԳ-ով հրետանային դիվիզիոնը ընդունակ են դիվիզիոնի մեկ համագարկով ոչնչացնել հակառակորդի հրետանային մարտկոցը: Նշանակետի բացահայտման և խոցման պարբերաշրջանի ժամանակը 1-3ր է:

Մեկ ռիդն –ի (ՀԶԿՌՀ 18 ՀՄ-ի) կազմում եղած ռադիոտեղորոշիչ-հակադիր շարժական օբյեկտները խոցելու համար նախատեսված դիվիզիայի հետախուզակրակային համալիրն ընդունակ է մեկ ժամում ոչնչացնել սվ-ի (միվ-ի) տիպի 8-10 օբյեկտ:

Էապես փոփոխվել է դիվիզիայի և գնդի հրետանին: Այն դարձել է ինքնագնաց, զրահապատ, լողացող, ինչն զգալիորեն բարձրացրել է դրա մարտավարական ու կրակային շարժունակությունը, ինչպես նաև կենսունակությունը: Մեծացել են հրաձգության հեռավորությունը, արկերի ու հրթիռների մարտական մասերի հզորությունն ու արդյունավետությունը, կրճատվել է կրակ բացելու ժամանակը: Հրետանային համակարգերի մեծամասնության համար սպառազինության մեջ ընդունված են բարձր հզորության զինամթերքներ, իսկ 100, 122 և 152-մմ տրամաչափի հրանոթներին, բացի դրանից, պատրաստի մահացու տարրերով արկեր: Այս ամենը թույլատրել է 2-2,5 անգամ մեծացնել նշանակետերի վրա դրանց գործողությունների արդյունավետությունն ու կրճատել կրակախնդիրները կատարելու համար արկերի ծախսը:

Ադ ուղղություններով էլ զարգանում է հրետանին ՆԱՏՕ-ի երկրներում: Դրանց դաշտային հրետանու կրակային հզորությունն զգալիորեն աճում է սպառազինության մեջ 155-մմ կառավարվող և 203,2-մմ ինքնանշանավող արկերի ու 120մմ տրամաչափի «Բուսարդե ականների զանգվածային ընդունմանը, ինչը դրանց կթույլատրի արդյունավետորեն ոչնչացնել զրահաօբյեկտների ու այլ կետային նշանակետերը զորամիավորումների, զորամասերի և ստորաբաժանումների մարտակարգերի ամբողջ խտությամբ:

Մարտավարական գոտում հակառակորդի կրակախոցման հեռանկարային միջոցներն են հ ա մ ա զ ա ր կ ա յ ի ն կ ր ա կ ի ռ ե ա կ տ ի վ հ ա մ ա կ ա ր գ ե ր ը (ՀԶԿՌՀ): Դրանց հատուկ են՝ կենդանի ուժին և տեխնիկային հանկարծակի կենտրոնացված հարված հասցնելու հնարավորությունը, կրակի մեծ խտությունն ու խմբային նշանակետերի խոցման բարձր աստիճանը, մարտադաշտում շարժունակությունն ու կենսունակությունը, ինչը ՀԶԿՌՀ-ն դառնում է անփոխարինելի զենք ժամանակակից մարտի տարաշարժային դինամիկ պայմաններում: Ամերիկայի մասնագետների գնահատմամբ ՀԶԿՌՀ MLRS մեկ կայանքի համազարկը պարկուճային զինամթերքներով հրաձգության ժամանակ իր արդյունավետությամբ հավասարվում է 203,2-մմ հաուրիցների երեք դիվիզիոնի համազարկին, այդ դեպքում ստեղծվում է համատարած խոցման գոտի մինչև 30հա մակերեսի վրա:

Այդ համակարգերը կատարելագործում են տանկերի պայքարելու, տեղանքի հեռավորական ականապատման համար ինքնանշանակվող ենթազինամթերքներով պարկուճային մարտական մասերը, ինչպես նաև կենդանի ուժը, կրակամիջոցները խոցելու և տեղանքն ականազերծելու համար ծավալուն պայթյունի զինամթերքները մշակելու գծով:

Կրակախոցման կարևոր բաղադրիչը հակատանկային միջոցների (ՀՏՄ-երի) օգտագործումն է, քանի որ տանկերն ու այլ զրահաօբյեկտները մարտադաշտում մնում են որպես կարևորագույն և զերակշռող զենք: ՀՏՄ-երի հիմնական տեսակներն են հակատանկային հրթիռները (վերգետնյա և ուղղաթիռային), կառավարվող արկերը (ԿԱ-երը) և հակատանկային թնդանոթները (ՀՏԹ-երը): Դրանց հրաձգության հեռավորությունն ու արդյունավետությունը անըդհատորեն աճում են և ներկայումս կազմում են. վերգետնյա ՀՏՀԿ-երի հրաձգության հեռավորությունը՝ մինչև 4կմ, ուղղաթիռայիններինը՝ մինչև 6կմ, խոցման հավանականությունը՝ 0,6-0,7. զրահահարությունը՝ 500-700մմ և ավելի. «Կաստետե, «Կրասնոպոլե, «Կոպերհեդե տիպի կառավարվող արկերի, ինչպես նաև հեռանկարային ՀՏՀՀ-երի խոցման հավանականությունը 0,9-0,95 է:

ՀՏՄ-երի արդյունավետությունը բարձրացնելու հետ միաժամանակ մի շարք երկրներում կտրուկորեն մեծանում է դրանց քանակը: Այսպես. «դիվիզիա-86ե-ում ՀՏՄ-երի քանակը մեծացել է. մդ-ում՝ 476 միավորով (ՀՄՄ-երում, ԶՀՄ-երում և ուղղաթիռներում տեղակայված ՀՏՀՀ կայանքներով), իսկ գտդ-ում՝ 419 միավորով:

Յուրաքանչյուր մոտոհետևակային գումարտակում կա 108 ՀՏՍ («Դրակոն 36 ՀՏՀՀ, 12 «ՏՈՌԻ-ե, ՀՏԿՀ ՀԱԿ և «ՏՈՌԻ-ով ՀՏԿՀ 60ՀՄՄ ու «Բրեդլիե ՉՀՄ): Դա թույլատրում է ստեղծել միջին խորություններ՝ ճակատի 1 կմ-ի վրա մինչև 50 ՀՏՍ, իսկ գլխավոր ուղղությունների վրա՝ 1,5-2 անգամ ավելի: ԱՄՆ-ում տանկերի դեմ պայքարում մեծ հույսը դնում են ԱՆ-64Ա «Ապաչե հակատանկային ուղղաթիռի վրա, որը կարող է կրել 16 «Հելֆայրե ՀՏԿՀ և մեկ թռիչքի ընթացքում ոչնչացնել մինչև վեց տանկ:

Գոյություն ունեցող ՀՏՀՀ-երի (ՀՏԹ-երի) կատարելագործումն ու նորերի ստեղծումը հանգում է արձակման (հրաձգության) հեռավորության, արագ հրաձգության, խանգարումապաշտպանվածության, զրահահարության, բարձրացման, ինչպես նաև լիցքավորման և նշանառման գործընթացների ավտոմատացման, որպեսզի գործնականում իրականացնել «կրակոց-խոցումե սկզբունքը:

Որակական տեղաշարժեր են տեղի ունենում օդային հարձակումներում և ջրային, հատկապես ցամաքային զորքերի օդուժի զարգացման մեջ: Դրանք ընդունակ են կտրուկորեն բարձրացնել համագորային զորամիավորումների և զորամասերի՝ զրահապատ օբյեկտների խոցելու, հետախուզություն վարելու, օդով զորաշարժ կատարելու և զորքերը կառավարելու, ինչպես նաև հակառակորդի կառավարման համակարգերի ռադիոէլեկտրոնային ճնշման հնարավորությունները:

Ցամաքային զորքերի օդուժը հանդերձելու համար ստանում են. ՄԻ-2ԿՊ, ՄԻ-28, Վ-80 արդիականացված մարտական ուղղաթիռներ, ՄԻ-26 տրանսպորտա-դեսանտային ուղղաթիռ, ՄԻ-9, ՄԻ-22 հատուկ ուղղաթիռներ և «Ռեյսե, «Կոիլոտե տեսակի անօդաչու հետախույզ-ինքնաթիռներ: Ամենաժամանակակից մարտական ուղղաթիռը ՄԻ-24Վ-ն է, որի սպառազինությունը թույլատրում է համագորային մարտում հուսալիորեն խոցել հակառակորդի հիմնական տիպային օբյեկտները: ՄԻ-26 ուղղաթիռն ապահովում է մինչև 20տ զանգվածով մարտական մեքենաների փոխադրումը, ինչն ավելի լայն հնարավորություններ է բացում մարտավարական օդային դեսանտներ կիրառելու և օդով զորքերի զորաշարժի համար: Համագորային մարտում ուղղաթիռների դերը հետագայում էլ կմեծանա:

ՆԱՏՕ-ի երկրներում մեծ ուշադրություն են դարձնում քանակային օդուժի զարգացմանը: ԱՄՆ-ի բանակում. օրինակ՝ այն զանգվածային քանակով ներդրված է բոլոր համագորային զորամիավորումներում և զրահասպառնակական գնդերում: Այդ դեպքում պլանավորվում է կրակային աջակցության ուղղաթիռների քանակն ու առաջիկա տասնամյակում մեծացնել 2 անգամ: Այդ ուղղաթիռները կունենան ոչ միայն ավելի հզոր հակատանկային սպառախություն, այլև 2-ից մինչև 4 «Սթինգերե ՉՀՀ –ների մինչև 5,5կմ հեռավորության վրա օդային մարտ վարելու համար:

Որակական փոփոխություններ են տեղի ունեցել նաև ճակատային օդուժում (ՆԱՏՕ-ի ՌՕՌԻ-ի մարտավարական օդուժում): Նրա սպառազինության հիմքը կազմում են կառավարվող հրթիռները, ճշտորդ օդուժային ռումբերը, չկառավարվող օդուժային հրթիռներն ու ռումբերը, ինչպես նաև 30մմ տրամաչափի բազմափող թնդանոթները: Ինքնաթիռների բարձր

մարտավարատեխնիկական բնութագրերը հզոր սպառազինությունը, կատարյալ նշանոցանավագնացական սարքավորումը թույլատրում են հաջողությամբ կատարել մարտական խնդիրները ցերեկն ու գիշերը ցանկացած օդերևութաբանական պայմաններում: Հակառակորդի կրակախոցումը դրանց մասնակցության բաժինը կարող է կազմել հարձակման ժամանակ մինչև 40%, հանդիպական մարտում՝ 50-60% պաշտպանությունում՝ 20% և ավելի:

ՆԱՏՕ-ի բլոկի հրամանատարությունը մարտավարական և բանակային օդուժը դիտում է որպես ժամանակակից պատերազմում գլխավոր հարվածային ուժ: Նրա գնահատմամբ սովորական պատերազմում կրակախոցման ժամանակ դրանց բաժինը կարող է կազմել մինչև 80%:

Օդուժի զարգացումն էական ազդեցություն է թողնում ընդհանուր մարտավարության վրա. մեծանում է մարտական գործողությունների մարտավարական գոտում հակառակորդի միաժամանակյա խոցման խորությունը, օդով հակառակորդին թևանցելով, ճակատից, թիկունքից և օդից միաժամանակյա հարվածներ հասցնելով համագորային մարտ վարելու նոր նշանակետեր կիրառելու պայմաններ են ստեղծում:

Այդ կապակցությամբ օդային հակառակորդի դեմ պայքարելու պրոբլեմն ավելի է սրվում: Դա առաջացրել է հ ա կ ա օ դ ա յ ի ն պ ա շ տ պ ա ն ու թ յ ա ն մ ի ջ ո ճ ն եր ի հետագա կատարելագործում և զարգացում: Ջորամիավորումների ու զորամասերի ՀՕՊ սպառազինության հիմքը կազմում են զենիթահրթիռային համալիրները (ՋՀՀ-երը): Ներկայումս սպառազինության մեջ մտցրել են նոր «Տորե ՉՀՀ համալիրներ, «Տունգուսկաե ՋԹՀՀ-եր, «Իզլաե ՇՋՀՀ-եր: Ընդունակ են փոքրանդրադարձնող մակերևույթ (0,1մ<sup>2</sup>) ունեցող օդային նշանակետերի դեմ հաջողությամբ վարել պայքարն ու ոչնչացնել հակառակորդի թռչող սպարատների բոլոր տեսակները, բացի մարտավարական և օպերատիվ-մարտավարական հրթիռներից, մինչև 0,6 հավանականությամբ: «Տունգուսկաե ՋԹՀՀ-ն, ինչպես հրթիռային, այնպես էլ թնդանոթային սպառազինություն ունեցող համապիտանի համալիր է, որը հատկապես արդյունավետ է ուղղաթիռների դեմ պայքարում:

Նշանակալից զարգացում է ստացել գրահատանկային տեխնիկան: S-64, S-72, S-80, S-90 տանկերի ժամանակակից նմուշները հանդերձված են 125-մմ հարթափող թնդանոթներով, որոնք ընդունակ են հակառակորդին խոցել ոչ միայն արկերով, այլև կառավարվող հրթիռներով 0,8-0,9 հավանականությամբ, հրթիռները կարող են ոչնչացնել նաև ցածր թռչող ուղղաթիռներ: Տանկերն ունեն կրակի կառավարման ավելի կատարյալ համակարգ, բարձր կայունության բազմաշերտ համակցված զրահ, ինքնախրամատավոր և ականապայթյունային արգելափակոցների հաղթահարման միջոցներ: Աճել է դրանց շարժունակությունը: Հզոր շարժիչները (1000-1500 ձ.ու.), կատարյալ փոխհաղորդակն ու ընթացամասը տանկերին թույլատրում են կտրտված տեղանքով շարժվել 40-45կմ/ժ արագությամբ:

Մոտավորապես նույնպիսի մարտավարատեխնիկական բնութագրեր ունեն ՆԱՏՕ-ի երկրների տանկերը, այդ թվում «Կատարելագործված Աբրամս-ը Մ-1Ա1, որում 105-մմ ակոսավոր թնդանոթի փոխարեն տեղակայված է 120-մմ հարթափող: Համագորային զորամիավորումներում մեծանում է տանկերի քանակը: Այսպես, ԱՄՆ-ի բանակի ծանր մեքենայացված դիվիզիան արդեն ունի 290 հիմնական տանկեր, զրահատանկայինը՝ 348, ԳՖՀ-ի մոտոհետևակային դիվիզիան՝ 252, տանկայինը՝ 308:

Զրահատանկային տեխնիկայի զարգացման մեջ նոր ուղղություն է հեռակառավարվող (ռոբոտացված) մարտական մեքենաների և մարտական ապահովման մեքենաների ստեղծումը:

Հետևակի մարտական մեքենաների (ՀՄՄ-երի) զարգացման մեջ նշանակալից քայլ է եղել սպառազինության մեջ ՀՄՄ-3-ի ընդունումը: Կրակային հզորությամբ և պաշտպանվածությամբ այն չունի իրեն հավասարը, դրա 100-մմ թնդանոթը թույլատրում է հակառակորդի զրահաօբյեկտները ոչնչացնել ոչ միայն արկերով, այլև կառավարվող հրթիռներով:

Ավելի կատարյալ զրահատանկային տեխնիկայով համագորային զորամիավորումների և զորամասերի հանդերձումն զգալիորեն բարձրացնում է դրանց կրակային հզորությունը, հարվածային ուժն ու տարաշարժությունը, էական ազդեցություն է թողնում համագորային մարտի բնույթի և այն վարելու եղանակների վրա:

Համագորային մարտում հաջողության հասնելիս կարևոր գործոնը **ռ ա դ ի ո է լ ե կ տ ր ո ն ա յ ի ն պ ա յ ք ա ր ն է** (ՌԷՊ-ը): ՆԱՏՕ-ի երկրների բանակներում ՌԷՊ-ը դիտվում է որպես մարտի բաղադրամաս: Զորքերի և զենքի կառավարման կազմալուծումը հաղթանակի հասնելու գրավականն է: Ուստի տեղի է ունենում մարտավարական օղակում ռադիոէլեկտրոնային ճնշման (ՌԷՃ-ի) ուժերի ու միջոցների հնարավորությունների անընդհատ աճման գործընթաց. ԱՄՆ-ի դիվիզիայի հետախուզության և ՌԷՊ-ի գումարտակն ընդունակ է (առանց սահմանափակման ՌԷՄ-երի աշխատանքային դեպքում) 2-3 ժ-ի ընթացքում բացահայտել միդ-ի (տդ-ի) կապի համակարգը, իսկ դրա ՀԿ-ն՝ 1 ժ-ի ընթացքում խախտել կարճալիք կապերի մինչև 85%-ը և գերկարճալիք կապերի մինչև 15%-ը: Մեկանգամյա օգտագործման հաղորդիչները (ՄՕՀ-եր) կիրառելով այդ գումարտակի ջանքերի աճման դեպքում կարելի է 0,5-0,6 հավանականությամբ ճնշել դիվիզիայի ռադիոցանցերի մինչև 60-80%-ը:

Ուստի կառավարման գաղտնիության հասնելը, հակառակորդի ռադիոէլեկտրոնային հետախուզության միջոցների և կապի համակարգերի ճնշումը մարտում հաջողության հասնելու կարևորագույն պայմաններից են: Կորցնելով հակատանկային զենքի կառավարման, նշանառման և ուղղորդման օպերատորներին, ճնշելով ՉՀՀ նշանառման համակարգերը, հրթիռների (ռումբերի) հետախուզման և նշանառման լազերային միջոցները, կառավարման ու նշանառման



հեռուստատեսային և այլ միջոցները՝ ՌԷՊ միջոցները կնպաստեն սեփական գորքերի անձնակազմի ու տեխնիկայի կորուստների զգալի իջեցմանը:

Ժամանակակից պայմաններում մարտավարական օղակում կվարվի յուրօրինակ «ռադիոէլեկտրոնային մարտե: Այն շահելու համար հարկավոր է ժամանակին իրականացնել հակառակորդի ռադիոէլեկտրոնային միջոցները ճնշելու և սեփական միջոցները պաշտպանելու միջոցառումների համալիր: Այդ խնդիրները լուծելու արդյունավետ ճանապարհը հետախուզության, ՌԷՃ-ի և կառավարման միջոցները ներգրավող ավտոմատացված հետախուզական ճնշող համալիր (ԱՀՃՀ) ստեղծելն է: Դա կթույլատրի 2-3 անգամ բարձրացնել դիվիզիայի ՌԷՃ հնարավորությունները:

Համագործակցության մարտի բնույթի և այն վարելու եղանակների վրա մեծ ազդեցություն է թողնում **ի ն ժ ե ն ե ր ա կ ա ն ս պ ա ռ ա զ ի ն ո թ յ ա ն և տ ե խ ն ի կ ա յ ի** զարգացումը: Զորամասերի սպառազինության մեջ մտնում է ականազերծման փոխադրովի համալիրը (ԱՓՆ-ն), որը կթույլատրի մի քանի անգամ կրճատել համագործակցության զորամասի և ստորաբաժանումների՝ հեռավորական ականապատման տեղամասերից դուրս գալու ժամանակը: Կատարելագործվում է պաշտպանության շրջանների (տեղամասերի, գոտիների) ամրաշինական սարքավորման ինժեներական տեխնիկան, զորամասերը հանդերձում են խրամատային լիցքերով սառած և պինդ բնահողերը մշակելու համար, ինչն առաջին հերթի ինժեներական աշխատանքները կատարելու ժամանակը 5 ժ-ով կրճատելու հնարավորություն է տալիս: Սպառազինության մեջ մտնում են նոր գետնանցման միջոցներ՝ լաստանավակամրջային մեքենա (ԼԿՄ), ՀՏՄ-2, արդիականացված կամրջանավակամրջային հավաքակալայն (ԿՀ-Մ), որոնք թույլատրում են ընթացքից հաղթահարել ջրարգելիքները և կրճատել դիվիզիայի անցման ժամանակը 10-12ժ, գնդի անցման ժամանակը՝ մինչև 2-3ժ:

Այսպիսով, գորքերում նոր զենք, ամենից առաջ գերճշգրիտ գորքերի և զենքի կառավարման ավտոմատացված համակարգեր, մարտի ապահովման միջոցներ կատարելագործելն է ու ներգրավելը փոխում են համագործակցության մարտի բովանդակությունն ու բնույթը-առաջացնում են այն նախապատրաստելու և վարելու գոյություն ունեցող եղանակները կատարելագործելու և նոր եղանակները մշակելու անհրաժեշտություն: Աճող կրակային հնարավորությունները, հարվածային ուժը, ցամաքային և օդային շարժունակությունը խոր մարտի տեսության հետագա զարգացման նյութական նախադրյալներն են ստեղծում: Մարտական գործողություններն էլ ավելի են տեղափոխում օդային տարածություն, ավելի հստակորեն է դրսևորվում հեռավոր կրակային մարտ վարելու միտումը:

**Քիմիական զենքը** շարունակում է մնալ մի շարք պետությունների բանակների սպառազինության մեջ: Դրա ժամանակակից վիճակը բնութագրվում է գերթունավոր նյութերի առկայությամբ, որոնք ընդունակ են զանգվածային կորուստներ հասցնել կենդանի ուժին, կաշկանդել գորքերի գործողությունները, մարդկանց,

սպառազինությունը, տեխնիկան և տեղանքը թունավոր նյութերով վարակելու միջոցով կազմալուծել թիկունքի մարմինների կառավարումն ու աշխատանքը:

Թունավոր նյութերը (ԹՆ-երը), որոնք դեռևս պահպանվում են մի շարք պետությունների բանակներում, դասակարգվում են ըստ մարտավարական նշանակության և ֆիզիոլոգիական ազդեցության:

Ըստ մարտավարական նշանակության ԹՆ-երը լինում են մահացու, ժամանակավորապես շարքից դուրս բերող, ուստիկանական և ուսումնական, իսկ ըստ մարդու օրգանիզմի վրա ազդեցության՝ նյարդակաթվածահարային, մաշկաթարախապալարային, հոգեբանական և գրգռիչ ազդեցության:

Մահացու են նյարդակաթվածահարային ազդեցության ԹՆ-երից ՎԻ-ԻՔՍ-ը, գոմանը, զարինը, և մաշկաթարախապալարային ազդեցության ԹՆ-երից թորած իպրիտը: Որպես ժամանակավորապես շարքից դուրս բերող օգտագործում են ԲԻ-ՋԵՏ ԹՆ-ն: Մշակված է նյարդակաթվածահարային ազդեցության ֆոսֆորօրգանական մահացու ԹՆ-ն զարինի և ՎԻ-ԻՔՍ միջև միջանկյալ ցնդականությամբ: Տվյալ տեսակի ԹՆ-ի համար մշակում են ՀՋԿՌՀ MLRS ռեակտիվ արկերի և 155-մմ հաուբիցային արկի երկակի մարտական մաս:

ՎԻ-Իքսն ու զարինը մի շարք երկրների բանակների հիմնական հաշվեցուցակային ԹՆ-երն են: Ընկնելով մարդու օրգանիզմի մեջ՝ դրանք խոցում են կենտրոնական նյարդային համակարգը: Առավել թունավոր է ՎԻ-Իքս ԹՆ-ն: Շնչառության օրգանների միջոցով, ըստ ազդեցության ՎԻ-Իքսը 10 անգամ թունավոր է զարինից և 200 անգամ թունավոր է իպրիտից, իսկ մաշկի միջոցով ազդեցությամբ կաթիլահեղուկային վիճակում հարյուր անգամ ուժեղ է դրանից: Շնչառության օրգանների միջոցով ՎԻ-Իքսի գոլորշիների կամ օդակախույթների ներգործության դեպքում մահը վրա է հասնում մի քանի րոպեների ընթացքում, իսկ մաշկի միջոցով ազդեցության դեպքում խոցման առաջին նշանները երևան են գալիս 40-60ր անց: Այն կիրառելու դեպքում ստեղծվում է նաև տեղանքի կայուն վարակում. ամռանը՝ 1,5-2 շաբաթ տևողությամբ, ձմռանը՝ մի քանի ամիս:

Նյարդակաթվածային խմբի ԹՆ-երից պաշտպանվելու համար են հակագազն ու մաշկը պաշտպանելու միջոցները:

Մի շարք երկրների բանակներում քիմիական զենք կիրառելու հիմնամիջոցներն են օդուժը, կառավարվող և չկառավարվող հրթիռները, փողավոր և ռեակտիվ հրետանին, քիմիական ֆուգասներն ու ԹՆ-երի փոշեցիրները:

Միևնույն միջոցներով թունավոր նյութերի կիրառման եղանակները կարող են տարբեր լինել: Օդուժի համար տիպական են քիմիական ռումբերի պարկուճների խմբային ռմբանետերն ու արտաթող օդագնացական սարքերից (ԱՕԱ-երից) ԹՆ-ի արտահոսքը, կառավարող և չկառավարվող հրթիռների համար՝ զորքերին կամ օբյեկտներին հասցվող կամ մենահատ կամ խմբային հարվածը վտանգավոր հրետանու համար՝ կարճաժամկետ (15վ) և երկարաժամկետ (մինչև 15ր) կրակային հարձակումները, ռեակտիվ հրետանու համար՝ ռեակտիվ արկերով համագարկերը:

Քիմիական զենքով խոցելու հիմնական օբյեկտներն են միջուկային հարձակման միջոցները, հենակետերում և դիմադրության հանգույցներում, հրետանու կրակադիրքերում, օդակայաններում և կառավարակետերում գտնվող կենդանի ուժը, ինչպես նաև տեղաբաշխման շրջաններում, մարտակարգում ու երթակարգերում գտնվող զորքերը:

Արևմուտքում ռազմական մասնագետների հայացքներով քիմիական զենքը ենթադրվում է կիրառել ինչպես հարձակման ժամանակ, այնպես էլ պաշտպանությունում: Հարձակվելու ժամանակ ավելի լայն կիրառություն է գտնում անկայուն զարին ԹՆ: ՎԻ-Իքս և իպրիտ կայուն թունավոր նյութերն առաջին հերթին կարելի է կիրառել այն շրջաններում, որոնց հակառակորդը չի պատրաստվում տիրել մոտ ժամանակներում կամ որոնք նախատեսվում է շրջանցել, ինչպես նաև թիկունքի առաջ շարժվող ռեզերվների ու զորամասերի նկատմամբ: Պաշտպանությունում ամենից հաճախ կարելի է կիրառել ՎԻ-Իքս, զարին, իպրիտ, այսինքն՝ մահացու և գերթունավոր ԹՆ-երը զորքերը խոցելու և տեղանքը վարակելու համար:

Կարևոր նշանակություն ունեցող առանձին օբյեկտներում գտնվող կենդանի ուժը ճնշելու համար հակառակորդը կարող է կիրառել ժամանակավորապես շարքից դուրս բերող ԹՆ (Բի-զետ), որն առաջացնում է մարդկանց հոգեկան գործունեության խանգարում, որի արդյունքում ԹՆ-ի ներգործությունից հետո մի քանի օրվա ընթացքում նրանք դառնում են անմարտունակ:

**Մանրէաբանական (կենսաբանական) զենքը** ՆԱՏՕ-ի մի քանի երկրների զինապահեստներում կազմում են այն մարտական միջոցները, որոնց խոցող ազդեցությունը հիմնված է մարդկանց, կենդանիների և բույսերի հիվանդություններ առաջացնող հիվանդաբեր միկրոօրգանիզմների և դրանց թույների օգտագործման վրա: Որպես կենսաբանական միջոցներ մարդկանց խոցելու համար հակառակորդը կարող է կիրառել ժանտախտի, տուլյարեմիայի, սիբիրյան խոցի, խլնախտի, խոլերայի, բժավոր տիֆի և այլ հիվանդությունների հարուցիչներ:

Մանրէաբանական (կենսաբանական) զենքի բնութագրական յուրահատկությունները. ընդարձակ շրջաններում զանգվածային վարակիչ հիվանդություններ առաջացնելու ընդունակությունը, ազդեցության տևականությունը, արտաքին միջավայրում և սննդամթերքներում միկրոօրգանիզմների հայտնաբերման բարդությունը, մեկ-երկու օրից մինչև մի քանի շաբաթ տևողությամբ ազդեցության գաղտնի (ինկուբացիոն) ժամանակաշրջանի առկայությունը:

Հիվանդաբեր մանրէներն ու դրանց թույները հակառակորդը կարող է կիրառել օդուժով, հրթիռներով, օդակախույթների գնեթատորներով և այլ միջոցներով չոր և հեղուկ ռեցեպտորների փոշիացման ճանապարհով, դիվերսիոն եղանակներով (ջրի աղբյուրների, պարենի, շենքերի վարակում), ինչպես նաև ավիացիոն բեռնարկերից վարակակիրների (միջատների, կրծողների) ցրման ճանապարհով:

Մարտում հակառակորդի ջախջախմանն ու հաղթանակին հասնում են միայն միջուկային ու սովորական զենքի հզոր հարվածներով, այլև ցամաքային զորքերի զորամիավորումների ու զորամասերի ակտիվ, վճռական գործողություններով:

**Ցամաքային զորքերը** երկրի զինված ուժերի առավել բազմատեսակն են: Դրանք նշանակված են մարտական գործողությունների մայրցամաքային թատերաբեմում նախահարձակի զորքերի խմբավորումների հարվածները և հետ մղելու, դրանք ջախջախելու, զբաղեցրած տարածքները, շրջանները, բնագծերը պահելու և հակառակորդի տարածքներին տիրելու համար: Օգտագործելով մեծ կրակային հզորություն, հարվածային ուժ և իրենից բարձր զորաշարժային հնարավորությունները՝ ցամաքային զորքերն ընդունակ են զինված ուժերի այլ տեսակների հետ փոխգործողության կամ ինքնուրույնաբար վարել վճռական հարձակում և համառորեն պաշտպանվել: Կազմակերպական տեսակներից դրանք բաղկացած են համագորային, տանկային բանակներից, բանակային կորպուսներից, դիվիզիաներից, բրիգադներից, գնդերից, ամրացրած շրջաններից ու առանձին զորամասերից:

Ցամաքային զորքերը ներառում են մոտոհրաձգային, տանկային, օդադեսանտային զորքերը, հրթիռային զորքերն ու հրետանին:

Հակատանկային պաշտպանության զորքերը, ցամաքային զորքերի օդուժը, զորատեսակները, ինչպես նաև հատուկ զորքերի զորամիավորումներն ու զորամասերը (հետախուզական, ինժեներական, քիմիական, կապի, ռադիոէլեկտրոնային պայքարի, տեխնիկական ապահովման, տեղաերկրաբաշխական, ջրօդերևութաբանական և թիկունքը):

Մոտոհրաձգային և տանկային զորքերը կազմում են ցամաքային հիմքը: Դրանք նշանակված են պաշտպանությունում՝ զբաղեցրած շրջանները, բնագծերն ու դիրքերը պահելու, հակառակորդի հարվածները հետ մղելու և նրա հարձակվող զորքերը խոցելու համար. հարձակվելիս՝ հակառակորդի պաշտպանությունը ճեղքելու, նրա դիմակայող խմբավորումները ոչնչացնելու, կարևոր շրջանները, բնագծերն ու օբյեկտները գրավելու, ջրարգելքները հաղթահարելու, նահանջող հակառակորդին հետապնդելու, հանդիպական ճակատամարտեր ու մարտեր վարելու համար:

Մոտոհրաձգային զորքերը, օժտված լինելով բարձր մարտական ինքնուրույնությամբ և համապիտանիությամբ, ընդունակ են նշած խնդիրները կատարել տեղանքի տարբեր պայմաններում և ցանկացած եղանակին, գլխավոր և երկրորդական ուղղությունների վրա, առաջին կամ երկրորդ էջելոնում ինչպես նաև ռեզերվների, ծովային և օդային դեսանտների կազմում: Մոտոհրաձգային զորքերի հիմքը կազմում են մոտոհրաձգային զորամիավորումներն ու զորամասերը: Բացի դրանից, դրանք կազմի մեջ են մտնում գնդացրահրետանային զորամիավորումներն ու զորամասերը:

Մոտոհրաձգային զորամիավորումների ու զորամասերի՝ տանկերով և հետևակի մարտական մեքենաներով, զրահափոխադրիչներով, ժամանակակից հրետանիով ու ՀՏԿՀ-ով, ՀՕՊ միջոցներով, իսկ զորամիավորումների՝ հրթիռային կայանքներով հագեցումը դրանց տալիս է մեծ կրակային հզորություն, հարվածային ուժ և տարաշարժություն, ապահովում է բարձր տեմպերով և մեծ խորությամբ մարտական գործողությունների վարումը:

**Տանկային զորքերը** ցամաքային զորքերի գլխավոր հարվածող ուժն են: Օժտված լինելով հզոր կրակով, բարձր շարժունակությամբ և տարաշարժությամբ, ինչպես նաև միջուկային պայթյունի, խոցող գործոնների ներգործությունից մեծ կայունությամբ՝ դրանք առավելապես օգտագործվում են գլխավոր ուղղությունների վրա. պաշտպանությունում՝ հիմնականում երկրորդ էշելոնների և ռեզերվների կազմում՝ պաշտպանության մեջ սեպվող հակառակորդին և նրան ջախջախելու, հակահարվածներ (հակագրոհ) հասցնելու համար, հարձակվելիս, որպես կանոն, առաջին և երկրորդ էշելոններում գտնվող հարվածային խմբավորումների կազմում, այդ թվում բանակի և նավատորմի գլխավոր ուժերից կտրվածության պայմաններում կատարվող գործողությունների համար:

Մոտոհրաձգային և տանկային զորքերն իրենց կազմում ունեն ցամաքային զորքերի հիմնական համագորային մարտավարական զորամիավորումներ (զորամասեր) հանդիսացող դիվիզիաներ, բրիգադներ, գնդեր: Դրանք նշանակված են համագորային, տանկային բանակների, բանակային կորպուսների (դիվիզիաների) կազմում այլ զորատեսակների ու հատուկ զորքերի զորամիավորումների ու զորամասերի հետ, օդուժի հետ, իսկ ծովափնյա ուղղությունների վրա նաև նավատորմի ուժերի հետ փոխգործողությամբ ինքնուրույնաբար մարտավարական խնդիրները կատարելու համար: Մոտոհրաձգային ու տանկային դիվիզիաները (բրիգադները, գնդերը) կարող են լինել տիպային կազմի, մոտոհրաձգային դիվիզիաները (բրիգադները, գնդերը), բացի դրանից, կարող են լինել հարավային և հյուսիսային տարբերակների, զրահապատ կամ ավտոմոբիլային տեխնիկայով, ինչպես նաև թեթև:

Մոտոհրաձգային և տանկային բրիգադները համագորային մարտավարական զորամիավորումներ են և նշանակված են մոտոհրաձգային ու տանկային դիվիզիաների կիրառմամբ մարտավարական խնդիրները լուծելու համար:

Գնդացրահրետանային դիվիզիան (գունդը) հատուկ կազմակերպության համագորային մարտավարական զորամիավորում (զորամաս) է, որը նշանակված է պետական սահմանի կարևոր տեղամասերը, խորքում գտնվող առանձին շրջանները, ինչպես նաև ափամերձ օբյեկտներն ու կղզիները ամրացած շրջանների օգտագործմամբ պաշտպանելու և պահպանելու համար:

Ցամաքային զորքի այլ զորատեսակների ու հատուկ զորքերի դիվիզիաները (գնդերը) համապատասխան զորատեսակների ու հատուկ զորքերի հիմնական մարտավարական զորամիավորումներն են զորամասերը, որոնք նշանակված են

մոտոհրաձգային, տանկային դիվիզիաների (զնդերի) հետ համատեղ կամ ինքնուրույնաբար խնդիրները կատարելու համար:

**Օ դ ա դ ե ս ա ն տ ա յ ի ն զ ո ր ք ե ր ը**, լինելով գերշարժունակ ցամաքային զորատեսակներ, նշանակված են օդով հակառակորդին թևանցելու և նրա թիկունքում խնդիրները կատարելու համար: Դրանք գերագույն գլխավոր հրամանատարության միջոցն են և կազմված են օդադեսանտային դիվիզիաներից, բրիգադներից և առանձին զորամասերից:

Օդադեսանտային դիվիզիաները կիրառում են որպես օպերատիվ և օպերատիվ-ռազմավարական օդադեսանտներ հակառակորդի պետական և ռազմական կառավարումը կազմալուծելու, միջուկային հարձակման միջոցները ոչնչացնելու, հակառակորդի պաշտպանության օպերատիվ և ռազմավարական խորքում գտնվող կարևոր շրջանները, օբյեկտներն ու բնագծերը գրավելու և պահելու, հարձակումը զարգացնելու, զորքերի խմբավորումները շրջապատելու և ոչնչացնելու, ջրային արգելքները հաղթահարելու գործում, ինչպես նաև նեղուցային գոտիներին ու կղզիացված տարածքներին նավատորմի ուժերի հետ համատեղ տիրելու գործում ճակատի զորքերին աջակցելու, հակառակորդի պլանաչափ ձևավորումները, վերախմբավորումները տապալելու և ռեզերվները ծավալելու, նրա թիկունքի աշխատանքը խախտելու համար:

Օդադեսանտային բրիգադները, որպես կանոն, տալիս են ճակատային հրամանատարության օպերատիվ ենթակայությանը և կիրառում են որպես օպերատիվ-մարտավարական (մարտավարական) օդադեսանտներ: Դրանք օգտագործում են հակառակորդի միջուկային հարձակման միջոցները. ՀՀՂ վերգետնյա տարրերը, կառավարակետերն ու այլ օբյեկտները ոչնչացնելու համար, հակառակորդի պաշտպանության օպերատիվ և մարտավարական խորքում գտնվող օդակայանները, կարևոր բնագծերը, ճանապարհահանգույցները, գետանցները, անցատեղերը, լեռնացքները գրավելու և պահելու համար, նրա ռեզերվների մոտենալն արգելելու համար: Բացի դրանից, դրանք կարելի է ներգրավել հակառակորդի իջնող դեսանտներն ու ճեղքող խմբավորումները ոչնչացնելու, առանձին ուղղություններն ու շրջանները, սեփական զորքերի արանքներն ու բաց թևերը պաշտպանելու (պահպանելու), հակառակորդի կողմից միջուկային և կրակային հարվածներ հասցնելու արդյունքում առաջացած ճեղքվածները փակելու համար:

Ցամաքային զորքերի **հ ր թ ի ո ա յ ի ն զ ո ր ք ե ր ն ու հ ր ե տ ա ն ի ն** համագորային մարտում հակառակորդի կրակախոցման հիմնական միջոցներն են:

Հրթիռային զորքերը նշանակված են հակառակորդի միջուկային և քիմիական հարձակման միջոցները, հետախուզահարվածային և քիմիական միջոցները, հետախուզահարվածային համալիրների և ԳՃԶ այլ համակարգերի վերգետնյա տարրերը, զորքերի հիմնական խմբավորումները. օդակայաններում գտնվող օդուժը, հակաօդային պաշտպանության միջոցներն ու օբյեկտները, կառավարակետերը,

թիկունքային ու այլ կարևոր օբյեկտները նրա օպերատիվ կառուցվածքի ամբողջ խորությամբ խոցելու համար. տեղանքի հեռավորական ակնապատման համար, իսկ ծովափնյա ուղղությունների վրա, բացի դրանից, հակառակորդի ռազմածովային ուժերի բազավորման կետերն ավերելու և նրա մարտական նավերն ու նավակները ոչնչացնելու համար: Միայն սովորական զենք կիրառելով մարտը վարելիս նրանք կարող են կիրառել սովորական հանդերձանքով հրթիռներ և պետք է գտնվեն միջուկային հարվածներ հասցնելու մշտական պատրաստականության մեջ: Հրթիռային զորքերը կազմված են համագորային միավորումների կազմի մեջ մտնող օպերատիվ-մարտավարական, մարտավարական հրթիռների զորամիավորումներից ու զորամասերից ու ստորաբաժանումներից:

Հրետանին նշանակված է հակառակորդի միջուկային և քիմիական հարձակման միջոցները, գերձզորիտ զենքի համակարգերը, հրետանին, տանկերը, հետևակի մարտական մեքենաները, հարթակներին գտնվող ուղղաթիռները, հակատանկային և այլ կրակամիջոցները, կենդանի ուժը, հակաօդային պաշտպանության միջոցները, կառավարակետերը, ռադիոէլեկտրոնային միջոցները խոցելու, ամրաշինական կառույցներն ավերելու, տեղանքի հեռավորական ակնապատման և լուսային ապահովման խնդիրները կատարելու համար:

Օժտված լինելով կրակի մեծ հզորությամբ և հրագության ճշգրտությամբ, խնդիրների կատարմանը պատրաստվելու արագությամբ, լայն զորաշարժի և կարևորագույն օբյեկտների վրա կրակն արագորեն կենտրոնացնելու ընդունակությամբ՝ հրետանին շարունակում է մնալ հակառակորդի կրակախոցման հիմնական միջոցը: Համագորային մարտում իր խնդիրները նա կատարում է օդուժի, հրթիռային զորամասերի և այլ զորատեսակների մարտական միջոցների հետ սերտ փոխգործողությամբ:

Հրետանին կազմված է հաուբիցային, թնդանոթային, ռեակտիվ, հակատանկային հրետանու զորամիավորումներից, զորամասերից ու ստորաբաժանումներից, ականանետներից, հակատանկային կառավարվող հրթիռներից, հրետանային հետախուզության զորամասերից ու ստորաբաժանումներից:

Կազմակերպական տեսակետից համագորային միավորումների, զորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների կազմի մեջ մտնող հրետանին զորային է և լինում է բանակային, կորպուսային, դիվիզիոնային, բրիգադային, գնդային ու գումարտակային: Համագորային միավորումների ու զորամիավորումների կազմի մեջ չմտնող հրթիռային և հրետանային զորամիավորումներն ու զորամասերը կազմում են գերագույն գլխավոր հրամանատարության ռեզերվը:

Ցամաքային զորքերի **հ ա կ ա օ դ ա յ ի ն պ ա շ տ պ ա ն ու թ յ ա ն զ ո ռ ք ե ր ն** օդային հակառակորդին խոցելու հիմնական միջոցներն են: Դրանք նշանակված են օդային հակառակորդի ռադիոլուկացիոն հետախուզության և նրա մասին սեփական զորքերին տեղեկացնելու, զորքերի խմբավորումները, կառավարա-

կետերը, օդակայանները, թիկունքային և այլ օբյեկտները հակառակորդի օդային հարվածներից պահպանելու և պաշտպանելու, օդուժի, թևավոր, օպերատիվ-մարտավարական և մարտավարական ձգաբանական հրթիռների, թռիչքի ժամանակ օդային դեսանտների ու օդաչարժ գորքերի և հետախուզահարվածային համալիրների օդային տարրերի դեմ պայքարելու համար: Դրանք ներառում են զենիթահրթիռային, զենիթահրթիռահրետանային, զենիթահրետանային և ռադիոտեխնիկական զորամիավորումները, զորամասերն ու ստորաբաժանումները և կազմակերպական տեսակետից մտնում են համագորային միավորումների, զորամիավորումների ու զորամասերի կազմի մեջ:

Զենիթահրթիռային զորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների սպառազինության մեջ մտնում են մոտակա գործողության գերշարժունակ զենիթահրթիռային համալիրները մինչև 10կմ, փոքր հեռավորության՝ մինչև 30կմ և միջին հեռավորության՝ մինչև 100կմ, հեռավոր գործողության՝ 100կմ և ավելի հեռավորությունից հակառակորդի օդային նշանակետերը խոցելու համար: Կախված համալիրների տեսակներից՝ դրանք կարող են ոչնչացնել առավելագույն չափով (մինչև 200մ), փոքր (200-1000մ), միջին (1000-4000մ), մեծ (4000-12000մ) բարձրությունների վրա և վերնուլորտում (12000մ-ից բարձր) թռչող օդային նշանակետերը:

Զենիթահրետանային զորամիավորումները, զորամասերն ու ստորաբաժանումները նշանակված են փոքր և միջին բարձրությունների վրա թռչող օդային նշանակետերը ոչնչացնելու համար: Դրանց սպառազինության մեջ մտնում են փոքր (20-ից մինչև 60մմ) և միջին (60-ից մինչև 100մմ) տրամաչափի զենիթային ինքնազնաց կայանքներն ու զենիթահրետանային համալիրները:

Ռադիոտեխնիկական զորամիավորումները, զորամասերն ու ստորաբաժանումները նշանակված են օդային հակառակորդին հետախուզելու, ՑԶ ՀՕՊ զորամիավորումների ու զորամասերի ՀՕՊ և ՀԿ հրամանատարական կետերը (կառավարակետերը) օդային իրավիճակի մասին տվյալներով ապահովելու, գորքերին տեղեկացնելու և սեփական օդուժի թռիչքներն ստուգելու համար:

Ցամաքային գորքերի օդուժը ճակատների գորքերի, համագորային (տանկային) բանակի և կորպուսների հրամանատարների բազմանպատակ մարտավարական միջուկն է: Այն նշանակում են հակառակորդի վերգետնյա (ծովային), գլխավորապես շարժական, օբյեկտներն առջևի եզրում՝ և մարտավարական խորքում խոցելու ճանապարհով գորքերի օդուժային աջակցության համար. նրա օդային (ծովային) դեսանտների ու օդաչարժ խմբերն իջեցման (նետման) շրջաններում ոչնչացնելու համար. օդում հակառակորդի ուղղաթիռները (փոքրաչափ և ցածրաթիռ նշանակետերը) խոցելու համար. սեփական մարտավարական (օպերատիվ-մարտավարական) օդային դեսանտներին աջակցելու և դեսանտավորելու համար. զորաշարժն ապահովելու համար. մարտավարական օդային հետազոտություն վարելու, օդից ականապատելու,



ռադիոէլեկտրոնային պայքարի և մարտական գործողությունների այլատեսակ ապահովումների համար:

Ցամաքային զորքերի օդուծի կազմի մեջ մտնում են մարտական ուղղաթիռները, հետախուզական ուղղաթիռներն ու անօդաչու թռչող ապարատները, տրանսպորտամարտական և տրանսպորտադեսանտային ուղղաթիռները, ինչպես նաև հատուկ ուղղաթիռները, որոնք նշանակված են ռադիոէլեկտրոնային խանգարումներ առաջացնելու, կառավարումն ու կապն ապահովելու, հրետանու կրակը ճշտելու, օդաճառագայթումային, քիմիական և ինժեներական հետախուզություն վարելու, թռչող անձնակազմերին որոնելու և փրկելու համար:

Ցամաքային զորքերի օդուծը կազմակերպական տեսակետից կազմված է առանձին մարտական ուղղաթիռային գնդերից առանձին մարտական և կառավարման ուղղաթիռային գնդերից, առանձին տրանսպորտամարտական ուղղաթիռային գնդերից, առանձին ուղղաթիռային սավառնակախմբերից, կառավարման ու հետախուզության առանձին ուղղաթիռային սավառնակներից, անօդաչու հետախույզ ինքնաթիռների առանձին սավառնակախմբերից:

Համագորային (տանկային) բանակների օդուծի զորամասերի կազմից մի քանի ուղղաթիռային ստորաբաժանումներ մարտական խնդիրները կատարելու ժամանակ կարող են տրվել մոտոհրաձգային (տանկային) դիվիզիաներ օպերատիվ ենթակայությանը և գործող դրանց պլանով:

Ցամաքային զորքերի օդուծն օժտված է բարձր զորաշարժային հնարավորություններով, ընդունակ է պարզ ու բարդ օդերևութաբանական պայմաններում գործել ցերեկն ու գիշերը, կիրառել խոցման բազմազան միջոցներ, տեղաբաշխել համագորային միավորումների ու զորամիավորումների մարտակարգերում: Ժամանակակից համագորային մարտում օդուծի կիրառումն ընդլայնում է զորքերի հետախուզության, հակառակորդի, հատկապես նրա տանկերի և այլ զրահապատ օբյեկտների կրակախոցման, մարտի ընթացքում ուժերով ու միջոցներով զորաշարժի հնարավորությունները, մեծացնում է օդային դեսանտներ իջեցնելով հակառակորդի վրա միաժամանակ ներգործելու խորությունը, բարձրանում է զորամիավորումների ու զորամասերի կառավարման օպերատիվությունը:

Ժամանակակից մարտում կարևոր դեր են խաղում հատուկ զորքերի ու թիկունքի զորամիավորումները, զորամասերն ու ստորաբաժանումները:

**Հ ե տ ա խ ու զ ա կ ա ն** **զ ո ռ ա մ ա ս ե ր ն** **ու**  
**ս տ ո ռ ա ք ա ժ ա ն ու մ ն ե ր ը** նշանակված են հակառակորդի և տեղանքի մասին տեղեկություններ ձեռք բերելու համար, ինչպես նաև հատուկ խնդիրներ կատարելու համար: Դրանցից են հատուկ նշանակության, ռադիո-, ռադիոտեխնիկական հետախուզության զորամասերը. զորային, հրետանային, ռադիոէլեկտրոնային, ինժեներական, ճառագայթումային և քիմիական հետախուզության զորամասերն ու ստորաբաժանումները:

**Ի ն ժ ե ն ե ր ա կ ա ն զ ո ր ք ե ր ը** նշանակված են ցամաքային զորքերի զորամիավորումների ու զորամասերի մարտական գործողությունների ինժեներական ապահովման համար, ինչպես նաև ինժեներական զինամթերքներ կիրառելով հակառակորդին կորուստներ պատճառելու համար: Ինժեներական զորքերից են ինժեներահետախուզական, արգելավերացման, արգելափակոցների, ինժեներասակրավորային, նավակամրջային, գետանցադեսանտային, ճանապարհակամրջաշինական, դիրքային, քողարկիչ, դաշտային ջրամատակարարման, կառավարակետերի սարքավորման, ինժեներանորոգման, էլեկտրատեխնիկական և այլ զորամիավորումները, զորամասերն ու ստորաբաժանումները:

**Ք ի մ ի ա կ ա ն զ ո ր ք ե ր ը** նշանակված են ցամաքային զորքերի զորամիավորումների ու զորամասերի մարտական գործողությունների քիմիական ապահովման համար, ինչպես նաև հրկիզիչ զենք կիրառելով հակառակորդին կորուստներ պատճառելու համար: Դրանցից են քիմիական պաշտպանության, ծխային, նշահատման ու հետախուզության, ճառագայթումային ու քիմիական հետախուզության, հրանետ, ծխային և այլ զորամիավորումները, զորամասերն ու ստորաբաժանումները:

**Կ ա պ ի զ ո ր ք ե ր ը** նշանակված են կապի համակարգերը ծավալելու և շահագործելու համար, ինչպես նաև զորքերի մարտական գործունեության բոլոր տեսակներում դրանց կառավարումն ապահովելու համար: Դրանց վրա դրվում են նաև կառավարակետերում գտնվող ավտոմատացման համակարգերի ու միջոցների ծավալման ու շահագործման և կապի անվտանգությունն ապահովելու կազմակերպական ու տեխնիկական միջոցառումների անցկացման խնդիրները: Դրանցից են հանգուցային, գծային, կապի անվտանգության ծառայության, սուրհանդակափոստային կապի և այլ զորամիավորումները, զորամասերն ու ստորաբաժանումները: Հանգուցային ստորաբաժանումներն ու զորամասերը նշանակված են կառավարակետերի կապի հանգույցների, հենակետային ու օժանդակ կապի հանգույցների ծավալման ու շահագործական սպասարկման համար, գծայինները լարային, ռադիոռելեային ու ներքնոլորտային կապի գծեր կառուցելու համար:

**Ռ ա դ ի ո է լ կ տ ր ո ն ա յ ի ն պ ա յ ք ա ր ի զ ո ր ա մ ա ս ե ր ն ու ս տ ո ր ա ր ա ժ ա ն ու մ ն ե ր ը** նշանակված են կապի, ռադիոտեղորոշման, ռադիոնավագնացության, ռադիոկառավարման միջոցների, օպտիկաէլեկտրոնային միջոցների ռադիոէլեկտրոնային ճնշման ճանապարհով զորքերի ու զենքի կառավարումը կազմալուծելու խնդիրները կատարելու համար, ինչպես նաև ռադիոպայթուցիչներ օգտագործող հրետանու և օդուժի հարվածներից զորքերի մարտակարգերը պաշտպանելու համար: Բացի դրանից, դրանք կիրառում են հակառակորդի ռադիոէլեկտրոնային հետախուզության, նրա հետախուզության տեխնիկական միջոցներին հակազդելու և համալիր տեխնիկական ստուգում իրագործելու համար: Դրանցից են ռադիոէլեկտրոնային պայքարի զորամասերն ու

ստորաբաժանումները, ինչպես նաև համալիր ու տեխնիկական ստուգման հանգույցները:

**Տեխնիկական ապահովման գործառնականությունները,** գործառնականությունն ու ստորաբաժանումները նշանակված են սպառազինությունը, մարտական ու այլ տեխնիկական, սովորական զինամթերքները, ռազմատեխնիկական ունեցվածքը պահպանելու, վնասվածների դեպքում վերականգնելու, ժամանակին շարք վերադարձնելու և դրանցով զորքերն ապահովելու համար, ինչպես նաև դրանք անխափան ու արդյունավետ կիրառությունն ապահովող վիճակում պահելու համար: Դրանցից են ճակատային, բանակային ու զորային նորոգման-վերանորոգման գործամասերն ու ստորաբաժանումները, կանոնակարգման սարքաբերման ու նորոգման աշխատանքների ստորաբաժանումները, սպառազինության (տեխնիկայի), զինամթերքների ու ռազմատեխնիկական ունեցվածքի պահեստները, չափիչ տեխնիկայի արհեստանոցները:

**Տեղաբերարաջխական գործառնականությունները** նշանակված են հատուկ քարտեզներով, երկրաբաշխական տվյալներով և տեղանքի փոփոխությունների մասին տեղեկությամբ ապահովելու համար:

Դրանցից են տեղաբերարաջխական գործամասերն ու ստորաբաժանումները, ինչպես նաև հրետանային տեղաբերարաջխական ծառայության ստորաբաժանումները:

Ջրօդերևութաբանական գործամասերն ու ստորաբաժանումները նշանակված են մարտական գործողությունների ջրաօդերևութաբանական (օդերևութաբանական) ապահովման համար: Դրանցից են հրթիռային, զենիթահրթիռային և համագորային գործառնականության օդերևութաբանական գործամասերն ու ստորաբաժանումները, ինչպես նաև ցամաքային զորքերի օդուժի օդերևութաբանական ստորաբաժանումները:

**Թիկունքի գործառնականությունները,** գործառնականությունն ու ստորաբաժանումները նշանակված են զորքերի թիկունքային ապահովման համար: Կատարվող խնդիրների մասշտաբներով ու բնույթով դրանք պատկանում են օպերատիվ կամ զորային թիկունքին:

Ջորային թիկունքը ներառում է նյութական ապահովման գործամասերն ու ստորաբաժանումները նյութական միջոցների պաշարներով, բոլոր գորատեսակների ու հատուկ զորքերի գործառնականության, գործամասերի ու ստորաբաժանումների կազմի մեջ մտնող՝ թիկունքի ավտոմոբիլային, բժշկական և այլ գործամասերն ու ստորաբաժանումները: Ըստ պատկանելիության զորային թիկունքը լինում է դիվիզիոնային, բրիգադային, գնդային, գումարտակային և դիվիզիոնային:

Ցամաքային զորքերն իրենց խնդիրները կատարում են ռազմավարական մայրցամաքային շրջաններում՝ օգտագործելով ռազմավարական նշանակության

հրթիռային զորքերի միջուկային և կրակային հարվածների արդյունքները, փոխգործակցելով հակաօդային պաշտպանության զորքերի, ռազմաօդային ուժերի զորամիավորումների ու զորամասերի հետ, իսկ ծովափնյա ուղղությունների վրա՝ նաև ռազմածովային նավատորմի հետ:

**Ռ ա զ մ ա վ ա ր ա կ ա ն ն շ ա ն ա կ ու թ յ ա ն հ ր թ ի ռ ա յ ի ն զ ո Ր Ք Ե Ր Ը** ռազմավարական միջուկային ուժերի գլխավոր բաղադրամասն են: Դրանք նշանակված են միջուկային պատերազմում հակառակորդի ռազմական ու ռազմատնտեսական պոտենցիալների հիմքը կազմող օբյեկտները խոցելու, նրա միջուկային հարձակման ռազմավարական ու այլ միջոցները ոչնչացնելու, զորքերի խոշոր խմբավորումները խոցելու, պետական ու ռազմական կառավարումը խախտելու, թիկունքը կազմալուծելու համար:

**Հ ա կ ա օ դ ա յ ի ն պ ա շ տ պ ա ն ու թ յ ա ն զ ո Ր Ք Ե Ր Ը** նշանակված են օդից ու տիեզերքից հակառակորդի հարվածներից երկրի վարչաքաղաքական, արդյունաբերատնտեսական կենտրոններն ու շրջանները, զինված ուժերի խմբավորումները, կարևոր ռազմական ու այլ օբյեկտները պաշտպանելու համար: Դրանց հիմնախնդիրներն են հակառակորդի օդատիեզերական հարձակման սկիզբը որոշելը, դրա մասին նախազգուշացնելը և օդում ու մոտակա տիեզերքում նրա հարվածային ուժերն ու միջոցները ոչնչացնելը: Բացի դրանից, դրանք պայքար են մղում հակառակորդի տիեզերական ու օդային հետախուզության միջոցների, նրա օդաշարժ զորքերի և թռիչքում օդային դեսանտների, հեռավոր ռադիոտեղորոշիչ հայտնաբերման ու նշանառման ինքնաթիռների ու հետախուզահարվածային համալիրների օդային տարրերի դեմ, մասնակցում են օդում գերիշխանության նվաճմանը: Խաղաղ և պատերազմի ժամանակ այդ խնդիրները կատարելու համար դրանք ցամաքային զորքերի հակաօդային պաշտպանության զորքերի և այլ ուժերի հետ համատեղ կազմում են երկրի հակաօդային պաշտպանության և զինված ուժերի միասնական համակարգ:

**Ռազմաօդային ուժերը** նշանակված են հակառակորդի օդուժային, ցամաքային և ծովային խմբավորումները, պետական ու ռազմական կառավարման համակարգի օբյեկտները, թիկունքի և ռազմատնտեսական պոտենցիալի օբյեկտները, տրանսպորտային հաղորդակցուղիները օդից խոցելու, ցամաքային զորքերի և նավատորմի ուժերի օդուժային աջակցության, օդային դեսանտները դեսանտավորելու, օդով զորքերն ու նյութական միջոցները փոխադրելու, օդային հետախուզություն վարելու և այլ խնդիրներ կատարելու համար: Դրանց է պատկանում օդում գերիշխանություն նվաճելու որոշիչ դերը:

Ռազմաօդային ուժերը բաղկացած են Գերագույն գլխավոր հրամանատարության օդուժից և ճակատային օդուժից:

Գերագույն գլխավոր հրամանատարության օդուժը ԳԳՀ-ի ռազմավարական միջոցն է ուղղությունների զորքերի հրամանատարությունների օպերատիվ միջոցը: Այն ներառում է հեռագնա և ռազմատրանսպորտային օդուժը:

**Հ ե ո ա գ ն ա օ դ ու ծ ը**, լինելով ԳԳՀ-ի միջոց, կազմում է ռազմավարական միջուկային ուժերի հիմքը: նախատեսված է տարբեր օպերացիոն ուղղությունների վրա ռազմավարական խնդիրներ լուծելու համար:

**Ռ ա գ մ ա տ ր ա ն ս պ ո թ տ ա յ ի ն օ դ ու ծ ը** Գերագույն գլխավոր հրամանատարության միջոցն է: Ի շահ ցամաքային զորքերի այն կարող է ներգրավվել օպերատիվ-ռազմավարական և օպերատիվ-օդային դեսանտները դեսանտավորելու, օդով մեծ հեռավորությամբ զորքերը, սպառազինությունը, զինամթերքն ու այլ նյութական միջոցները փոխադրելու համար:

**Ճ ա կ ա տ ա յ ի ն օ դ ու ծ ը** ճակատների զորքերի հրամանատարների օպերատիվ միջոցն է: Ի շահ ցամաքային զորքերի զորամիավորումների ու զորամասերի այն կարող է կատարել հակառակորդի հրթիռամիջուկային միջոցներն ու օդուժը, օպերատիվ խորքում նրա ռեզերվներն ու կարևոր օբյեկտները ոչնչացնելու խնդիրները. պայքար մղել հետախուզության, բարձր ճշտության զենքի համակարգերի ուղղորդման և գործարկման միջոցների դեմ. մարտում իրականացնել զորամասերի և զորամիավորումների օդուժային աջակցությունը, ինչպես նաև օդային և ծովային դեսանտների իջեցումն ու աջակցումը. զորքերն ու այլ օբյեկտները պաշտպանել հակառակորդի օդուժի հարվածներից. իրականացնել ականապայթուցիկ արգելափակոցների կանգնեցումը օդից, ինչպես նաև վարել օպերատիվ ու մարտավարական օդային հետախուզություն ու ռադիոէլեկտրանային պայքար: Կազմակերպական տեսակետից ճակատային օդուժը բաղկացած է ուժակոծիչ, կործանիչ-ուժակոծիչ և կործանիչ օդուժի դիվիզիաներից, առանձին օդուժային գնդերից և տրանսպորտային, հետախուզական ու հատուկ օդուժի օդուժային սավառնակախմբերից:

Օդուժի տեսակներից են՝ ուժակոծիչ, կործանիչ-ուժակոծիչ, գրոհիչ, կործանիչ, հետախուզական, տրանսպորտային և հատուկ օդուժերը:

Ռուժակոծիչ օդուժը, իր սպարազինությունում ունենալով ռազմավարական, հեռագնա և ճակատային ուժակոծիչ ինքնաթիռներ, ռազմաօդային ուժերի հիմնական հարվածային միջոցն է: Այն նախատեսված է կարևոր վերգետնյա (ծովային) օբյեկտները խոցելու, առավելապես ռազմավարական և օպերատիվ խորքում, և մարտադաշտին հակառակորդի ռեզերվների մոտեցումն արգելելու համար: Ռուժակոծիչ օդուժը կարող է ներգրավվել ի շահ ցամաքային զորքերի զորամիավորումների և զորամասերի օդային հետախուզություն վարելու և օդից ականապատում անելու համար:

Կործանիչ-ուժակոծիչ օդուժը, իր սպարազինությունում ունենալով կործանիչ ուժակոծիչներ, ճակատային օդուժի բազմանպատակ միջոց է: Այն նախատեսված է հակառակորդի մարտավարական ու օպերատիվ խորքում միջուկային հարձակման միջոցները ոչնչացնելու, վերգետնյա (ծովային), այդ թվում փոքրաչափ և շարժական, օբյեկտները խոցելու, ինչպես նաև օդում հակառակորդի ինքնաթիռները, ուղղաթիռները, թևավոր հրթիռներն ու անօդաչու միջոցները ոչնչացնելու համար:

Գրոհիչ օդուժը, իր սպառազինությունում ունենալով գրոհիչ ինքնաթիռներ, զորքերի օդուժային աջակցության միջոց է: Այն նախատեսված է հակառակորդի կենդանի ուժը, միջուկային հարձակման միջոցները ոչնչացնելու, վերգետնյա (ծովային), գլխավորապես փոքրաչափ ու շարժական, օբյեկտները առավելապես առջևի եզրում, մարտավարական, ինչպես նաև մոտակա օպերատիվ խորքում խոցելու համար: Գրոհիչ օդուժը կարող է ներգրավվել օդում հակառակորդի ուղղաթիռները ոչնչացնելու, օդային հետախուզություն վարելու և օդից ականապատում կատարելու համար:

Կործանիչ օդուժը, իր սպառազինությունում ունենալով կործանիչ ինքնաթիռներ, ճակատային օդուժի հիմնական միջոցն է օդային հակառակորդի դեմ պայքարելու համար: Այն նախատեսված է օդում հակառակորդի անօդաչու միջոցներն ու թևավոր հրթիռները, ուղղաթիռները, ինքնաթիռները ոչնչացնելու համար, կարող է ներգրավվել մարտավարական և մոտակա օպերատիվ խորքում վերգետնյա (ծովային) օբյեկտները խոցելու և օդային հետախուզություն վարելու համար: Ցամաքային զորքերի զորամիավորումներն ու զորամասերը պաշտպանելով օդից հակառակորդի հարվածներից՝ կործանիչ օդուժն ապահովում է դրանց տարածաշարժության ազատությունն ու հարձակման բարձր տեմպը:

Հետախուզական օդուժը, իր սպառազինությունում ունենալով օդանավավարվող և անօդաչու հետախույզ ինքնաթիռներ, նախատեսված է հակառակորդի, տեղանքի և եղանակի օդային հետախուզություն վարելու համար: Առանձին դեպքերում հետախույզ ինքնաթիռները հետախուզություն վարելու հետ միաժամանակ կարող են ոչնչացնել իրենց բացահայտած՝ հակառակորդի հասկապես կարևոր օբյեկտները:

Տրանսպորտային օդուժը, իր սպառազինությունում ունենալով տրանսպորտային ինքնաթիռներ, նախատեսված է օդով սպառազինություն, զինամթերքներ և այլ նյութական միջոցներ փոխադրելու համար:

Հատուկ օդուժը կիրառում են հակառակորդի ռադիոէլեկտրոնային միջոցներին խանգարումներ ստեղծելու, կառավարում և կապ ապահովելու, հրետանու կրակը ճշտելու, ճառագայթումային, քիմիական և ինժեներական հետախուզություն վարելու, օդաչուական անձնակազմերը որոնելու և փրկելու, թռիչքի ընթացքում ինքնաթիռները վառելիքով լիցքավորելու, վիրավորներին և հիվանդներին տարհանելու համար:

Ռազմածովային նավատորմը նախատեսված է հակառակորդի ռազմական և ռազմատնտեսական պոտենցիալի օբյեկտները խոցելու և օվկիանոսային ռազմավարական շրջաններում (գոտիներում) նրա ռազմածովային ուժերը ջախջախելու համար: Ի շահ ծովափնյա ուղղությունների վրա գործող ցամաքային զորքերի զորամիավորումների ու զորամասերի ռազմածովային նավատորմի զորամիավորումներն ու զորամասերը կատարում են հետևյալ խնդիրները. ոչնչացնում են զորքերի վրա ներգործող՝ հակառակորդի ռազմածովային ուժերի խմբավորումները, հատկապես միջուկային զենք կրող նավերը. տեղատարափ

գոտիներին տիրելու գործում աջակցում են ցամաքային զորքերի զորամիավորումներին. իրագործում և ապահովում են ծովային դեսանտների իջեցումը. չեն թույլատրվում ծովով հակառակորդի ռեզերվների ու նյութական միջոցների փոխադրումը. մասնակցում են պաշարման գործողություններին ծովափին սեղմված հակառակորդի խմբավորումները ծովից մեկուսացնելու նպատակով և այդ խմբավորումները ոչնչացնելու գործում աջակցում են ցամաքային զորքերին. իրագործում են ծովափի երկայնքով գործող զորքերի կրակային աջակցությունը. ապահովում են ջրային արգելքների հաղթահարումը. մասնակցում են հակառակորդի ծովային դեսանտների դեմ պայքարին. իրագործում և ապահովում են ցամաքային զորքերի զորամիավորումների ու զորամասերի փոխադրումները և դրանց նյութական միջոցների բերումը:

Նավատորմի զորամիավորումներն ու զորամասերը, իրենց սպառազինությունում ունենալով միջուկային զենք ու հզոր կրակամիջոցներ, ընդունակ են զգալի օգնություն ցույց տալ ցամաքային զորքերի զորամիավորումներին ու զորամասերին ծովափնյա ուղղությունների վրա մարտական խնդիրները կատարելու գործում:

### **3. Համագորային մարտի էությունն ու դրան բնորոշ գծերը**

Զինված պայքարում ցամաքային զորքերը կիրառում են բանակային (կորպուսային) օպերացիաների, ճակատամարտերի և մարտերի ձևով:

**Բանակային (կորպուսային) օպերացիան** նպատակով, խնդիրներով, տեղով ու ժամանակով համաձայնեցված ու փոխկապակցված օպերացիոն ուղղության վրա կամ որոշակի ընդարձակ շրջանում սահմանված ժամանակաշրջանում օպերատիվ կամ օպերատիվ-մարտավարական խնդիրներ լուծելու համար միասնական մտահղացմամբ անցկացվող միաժամանակյա ու հաջորդական ճակատամարտերի, մարտերի, համագորային (տանկային) բանակի (կորպուսի) հարվածների ու զորաշարժի համախմբվածությունն է:

**Ճակատամարտը** օպերացիայի բաղադրամասն է, ընդհանուր մտահղացմամբ միավորված և մեկ օպերատիվ խնդիր կատարելու համար զորքերի որոշակի խմբավորումների կողմից կատարվող մի շարք առավել կարևոր ու լարված մարտերի ու հարվածների համախմբվածությունն է:

Մարտը հակառակորդին ոչնչացնելու (ջախջախելու), նրա հարվածները հետ մղելու և սահմանափակ շրջանում կարճ ժամանակի ընթացքում այլ մարտավարական խնդիրներ կատարելու նպատակներով զորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների կազմակերպված և նպատակով, տեղով ու ժամանակով համաձայնեցված հարվածներն են, կրակն ու զորաշարժը: Այն ցամաքային զորքերի, օդուժի ու նավատորմի զորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների մարտավարական գործողությունների հիմնական ձևն է, զորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների մարտավարական

գործողությունների հիմնական ձևն է, գորամիավորումների, գորամասերի ու ստորաբաժանումների անձնակազմի բարոյական ու ֆիզիկական ուժերի բազմակողմանի փորձարկում: Դրա հաջողությունը շատ բաներով կախված է մարդկանց ու տեխնիկայի արիությունից, կայունությունից, բարոյական որակներից և մարտ վարելու պատրաստականության մակարդակից:

Մարտի նպատակն է հետ մղել հակառակորդի կենդանի ուժի հարվածները (հարձակումը) և ոչնչացնել ու գերեվարել այն, իսկ ու ոչնչացնել նրա սպառազինությունը, մարտական տեխնիկան և ճնշել հակառակորդի հետագա դիմադրության ընդունակությունը: Դրան հասնում են բոլոր զինատեսակների, այդ թվում միջուկայինի, հզոր հարվածներով, ինչպես նաև գորամիավորումների, գորամասերի ու ստորաբաժանումների ակտիվ ու վճռական գործողություններով՝ համարձակ գորաշարժի կատարմամբ:

Մարտը կարող է լինել համագորային, օդային, հակաօդային և ծովային:

Համագորային մարտը վարում են ցամաքային զորքերի բոլոր զորատեսակների, հատուկ զորքերի և զինված ուժերի այլ տեսակների գորամիավորումների, գորամասերի ու ստորաբաժանումների միավորված ջանքերով՝ կիրառելով միայն սովորական զենք կամ կիրառելով միջուկային զենք և այլ խոցամիջոցներ: Այն վարելու եղանակները (առաջադրած խնդիրները լուծելիս ուժերն ու միջոցները կիրառելու կարգը) կախված են իրավիճակի պայմաններից և կիրառվող զինատեսակներից:

Միայն սովորական զենք կիրառելով մարտ վարելու եղանակների հիմքը հակառակորդի խմբավորումների հարվածների հաջորդական հետմղումն է (ջախջախումը): Այս եղանակը պահանջում է գլխավոր ուղղության վրա (շրջանում) ուժերի ու միջոցների վճռական կենտրոնացում, հակառակորդի անմիջականորեն դիմակայող խմբավորման կրակախոցման հմուտ կազմակերպում և իրականացում՝ միաժամանակ ներգործելով խորքում գտնվող նրա ռեզերվների ու օբյեկտների վրա. կարևոր բնագծերը (շրջանները, դիրքերը) պահելու համար ջանքերի վճռական աճեցում, կարևորագույն ուղղությունների վրա (շրջաններում) ձեռք բերած հաջողության զարգացում. միջուկային զենքի կիրառմամբ անհապաղ գործողություններին զորքերի մշտական պատրաստականություն:

Միջուկային զենք կիրառելով մարտ վարելու եղանակների հիմքը հակառակորդի զորքերի խմբավորումների ու կարևոր օբյեկտների միաժամանակյա խոցումն է միջուկային հարվածներով դրանց տեղաբաշխման ամբողջ խորքում՝ հետագայում մոտոհրաձգային, տանկային և օդադեսանտային գորամիավորումների ու գորամասերի հարվածներով հետ մղելով հակառակորդի հարվածները (ավարտելով նրա ջախջախումը): Այդ դեպքում կարևոր նշանակություն կունենան. հակառակորդի միջուկային հարվածները հետ մղելու (խափանելու, թուլացնելու) համար արդյունավետ միջոցների ձեռնարկումը, նրա հուսալի միջուկային ու կրակային խոցումը. նրա ջախջախումն ավարտելու համար գորամասերի (ստորաբա-



ժանումների) կողմից միջուկային ու կրակային հարվածների արդյունքների վճռական օգտագործումը. մարտունակ զորամասերի (ստորաբաժանումների) գործողություններում, միջուկային հարվածների ենթարկված զորքերի մարտունակությունը վերականգնելու և դրանց հետագա գործողությունները կազմակերպելու գործում հակառակորդից առաջ ընկնելը:

Ժամանակակից համագորային մարտը կազմակերպում ու վարում են, որպես կանոն, բանակային (կորպուսային), ճակատային, նավատորմային օպերացիաների համակարգում: Այն դրանց բաղադրամասն է:

Համագորային մարտի հիմնական տարրեն են **հակառակորդի կրակային**, իսկ երբեմն էլ **միջուկային խոցումը, զորքերի հարվածն ու զորաշարժը:**

Համագորային մարտում **հ ա կ ա ո ա կ ո թ դ ի կ ր ա կ ա յ ի ն խ ո ճ ու մ ը** զինված ուժերի տարբեր տեսակների, զորատեսակների ու հատուկ զորքերի միջոցներով նրա վրա համաձայնեցված միաժամանակյա և հաջորդական համալիր կրակային ներգործումն է սովորական ու հրկիզիչ նյութերով հանդերձված հրթիռների ու զինամթերքների կիրառմամբ: Կրակախոցումը ներառում է. հրթիռների, ռումբերի և օդուժային զենքի այլ տեսակների կիրառմամբ հրթիռային զորքերով և օդուժով հարվածներ հասցնելը. տանկային ու մոտոհրաձգային զորքերի հրետանիով ու կրակամիջոցներով կրակի բոլոր տեսակների վարումը, հեռակառավարվող ականապայթուցիկ արգելափակոցների ու հրկիզիչ միջոցների կիրառումը, իսկ ծովափնյա ուղղությունների վրա՝ նավերի միջոցներով և նավատորմի ափային հրթիռահրետանային միջոցներով հրթիռային հարվածներ հասցնելն ու կրակ վարելը:

Հակառակորդի կրակախոցումը, անկախ միջուկային զենքի կիրառումից, կազմակերպում և իրագործում են բոլոր մարտատեսակներում դիվիզիայի կրակամիջոցների հասանելիության (մարտական խնդրի) խորությամբ հակառակորդի միջուկային ու քիմիական հարձակման միջոցները, նրա զորքերի հիմնական խմբավորումը, ռեզերվները խոցելու, նրա նկատմամբ կրակային գերակշռության ձեռք բերելու և այն պահպանելու, կառավարման, հակաօդային պաշտպանության, թիկունքի աշխատանքի համակարգը խախտելու և մոտոհրաձգային ու տանկային զորամիավորումներով ու զորամասերով մարտական խնդիրները հաջողությամբ կատարելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակներով:

**Հ ա կ ա ո ա կ ո թ դ ի մ ի ջ ու կ ա յ ի ն խ ո ճ ու մ ը** հրթիռային զորքերով և օդուժով նրան առաջին ու հետագա միջուկային հարվածները հասցնելն է: Այն իրագործում են հակառակորդի զորքերի օպերատիվ կառուցվածքի ամբողջ խորքով, իսկ դիվիզիայի ուժեղացման միջոցներով՝ մարտավարական ու մոտակա օպերատիվ խորքով:

Առաջին միջուկային հարվածը հասցնում են ավագ հրամանատարի (պետի) պլանով ու թույլտվությամբ: Հատվածի նպատակն է վճռականորեն խոցել դիմակայող

հակառակորդին և մոտոհրաձգային ու տանկային զորքերի հետագա գործողություններով նրա ջախջախումն ավարտելու համար պայմաններ ստեղծել: Հարվածը հասցնելու ժամանակ խոցման հիմնական օբյեկտներն են հակառակորդի միջուկային ու գերձշգրիտ զենքի միջոցները, մարտավարական ու բանակային օդուժի բազավորման օդակայանները, առաջին ու երկրորդ էշելոնների զորքերի հիմնական խմբավորումները, ռեզերվները, հակաօդային պաշտպանության օբյեկտները, կառավարակետերն ու այլ կարևոր նշանակետերը: Դիվիզիան իր տրամադրության տակ գտնվող՝ միջուկային զինամթերքի կիրառող ստորաբաժանումներով կմասնակցի առաջին միջուկային հարվածին՝ այդ դեպքում օբյեկտները խոցելով վերադաս ատյանի ցուցումով, որպես կանոն, իր գործողությունների ուղղության վրա ինչպես պաշտպանությունում, այնպես էլ հարձակվելիս:

Հետագա խմբային և միակի միջուկային հարվածները մարտի ընթացքում կարելի է հասցնել դիվիզիայի հրամանատարի որոշմամբ միջուկային միջոցների պատրաստականությունն ու խոցման օբյեկտների հայտնաբերմանը զուգընթաց:

**Հ ա ր վ ա ծ ը** մարտի բաղադրամասն է, այն ունեցած բոլոր միջոցներով կամ զորքերով հակառակորդի զորքերի խմբավորումների և օբյեկտների վրա հզոր ներգործության ճանապարհով դրանց միաժամանակյա խոցումն է: Կախված կիրառվող զենքից և մասնակցող ուժերից՝ հարվածները կարող են լինել միջուկային, կրակային և զորքերի կողմից հասցվող հատվածներ. ըստ տեղ հասցնելու միջոցների՝ հրթիռային, հրետանային և օդուժային. ըստ մասնակցող միջոցների ու խոցվող օբյեկտների քանակի՝ կենտրոնացած, խմբային ու միակի:

Չորքերի հարվածը որպես համագորային մարտի բաղադրամաս դիմակայող հակառակորդի, նրա ռեզերվների ջախջախումն ավարտելու և առաջադրած մարտական խնդիրը կատարելու նպատկաներով մոտոհրաձգային ու տանկային զորամիավորումների, զորամասերի, ստորաբաժանումների կրակի ու շարժման զուգակցությունն է:

Չորամասերի ու զորամիավորումների մեծ զորաշարժային հնարավորությունները, հակառակորդի մարտակարգերում արանքների ու բաց թևերի առկայությունը ստեղծում են զորաշարժ իրականացնելու համար բարենպաստ պայմաններ:

**Չ ո ր ա շ ա ր ժ ը** առաջադրած կամ մարտի ընթացքում նոր ծագող խնդիրները կատարելու համար հակառակորդի նկատմամբ շահավետ դիրք զբաղեցնելու և ուժերի ու միջոցների անհրաժեշտ խմբավորում ստեղծելու նպատակներով նոր ուղղության վրա (բնագծի վրա, շրջանում) մարտի ընթացքում զորամասերի ու ստորաբաժանումների կազմակերպված տեղաշարժն է, ինչպես նաև հակառակորդի կարևորագույն խմբավորումների ու օբյեկտների առավել արդյունավետ խոցման համար հարվածների ու կրակի տեղաբաշխումը կամ

վերանշանատումը (կենտրոնացումը, բաշխումը): Զորաշարժի տեսակներն են թևանցումը, շրջանցումը, նահանջը և հարվածներով ու կրակով գորաշարժը:

Դրած նպատակներին հասնելու համար յուրաքանչյուր կողմը կձգտի ակտիվ մարտական գործողություններ՝ կիրառելով զանազան մարտատեսակներ, որոնք դասակարգում են հիմնական, առավել էական տարբերիչ հատկանիշներով, այնպիսիներով, ինչպիսիք են մարտի նպատակն ու դրան հասնելու եղանակները: Կախված դրանից՝ համագորային մարտի հիմնատեսակներն են պաշտպանությունն ու հարձակումը: Հարձակողական մարտի տարատեսակը հանդիպական մարտն է: Պատերազմի սկզբում պաշտպանությունը կլինի կարևորագույն ու առավել տարածված մարտատեսակը:

**Պաշտպանությունը** իրագործում են գլխավոր նպատակով՝ հետ մղել հակառակորդի հարձակումը, նրան պատճառել կորուստներ և ստեղծել սեփական զորքերի հարձակման անցնելու համար պայմաններ: Պաշտպանությունը թույլատրում է ժամանակ շահել, խնայել նույն ուղղությունների վրա գտնվող ուժերն ու միջոցները ու դրանով իսկ ստեղծել այլ ուղղությունների վրա հարձակում վարելու համար պայմաններ: Պաշտպանությունը լայնորեն կկիրառվի պատերազմի ոչ միայն սկզբում, այլև ընթացքում: Սակայն պետք է հաշվի առնել, որ միայն պաշտպանությամբ հաղթանակի հասնելն անհնար է:

Հարձակումը կատարում են հակառակորդին լիովին ջախջախելու և տեղանքի կարևորագույն շրջաններին (օբյեկտներին) տիրելու նպատակներով: Այն ունեցած բոլոր միջոցներով հակառակորդի խոցումն է, վճռական գրոհը, դեպի տեղաբաշխման խորքը զորքերի սրընթաց առաջխաղացումը, կենդանի ուժի ոչնչացումն ու գերեվարումը, զենքի, ռազմական տեխնիկայի խլումը, տեղանքի զանազան օբյեկտների և նշված շրջանների (բնագծերի) գրավումը: Կածված իրավիճակից՝ հարձակումը կարելի է վարել պաշտպանվող, հարձակվող կամ նահանջող հակառակորդի վրա:

Դիվիզիայի (բրիգադի, գնդի) համար առավել տիպականը պատերազմի սկզբում կլինի հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում, որպես կանոն, պաշտպանության դիրքից հարձակման անցնելը: Պատերազմի ընթացքում հարձակման դերն աճում է, քանի որ միայն բարձր տեմպով և մեծ խորությամբ կատարվող վճռական հարձակմամբ կարելի է հասնել հակառակորդի լրիվ ջախջախման և տեղանքի կարևոր շրջանների տիրման:

Պաշտպանությունն ու հարձակումը միմյանց հետ սերտորեն փոխկապակցված են: Ցանկացած պաշտպանություն պարունակում է հարձակման տարրեր, իսկ հարձակում՝ պաշտպանության տարրեր:

Հանդիպական մարտը որպես հարձակողական մարտի տարբերակ ծագում է այն ժամանակ, երբ երկու կողմերն էլ ձգտում են իրենց առաջադրած մարտական խնդիրները լուծել հարձակմամբ:

Համագործակցության մարտի տեսակները սերտորեն կապված են միմյանց հետ: Մարտական գործողությունների ընթացքում գորքերը, կախված իրավիճակից, ուժերի ստեղծված հարաբերակցություններից և առաջադրած խնդիրներից, կարող են մի մարտատեսակից անցնել մյուսին:

Յուրաքանչյուր մարտատեսակ ունի իր առանձնահատկությունները, իր բնորոշ գծերը: Բայց դրանց բոլորին հատուկ են **ժամանակակից մարտը բնութագրող ընդհանուր գծերը**` մարտական գործողությունների նպատակների վճռականությունը, բարձր լարվածությունը արագահոսությունն ու շարժունությունը, վերգետնյա օդային բնույթը, կողմերի մարտակարգերի կառուցվածքի ամբողջ խորությամբ միաժամանակյա հզոր կրակային ներգործությունը, մարտական խնդիրները կատարելու բազմազան եղանակների կիրառությունը, գործողությունների մի տեսակներից մյուսներին արագ անցումը, բարդ ռադիոէլեկտրոնային իրավիճակը:

Մարտական գործողությունների **վ ճ ռ ա կ ա ն ո լ թ յ ո լ ն ը** կանխորոշվում է քաղաքական նպատակների վճռականությամբ, ապագա պատերազմի սուր բնույթով, հզոր ժամանակակից խոցամիջոցների կիրառությամբ, անձնակազմի բարձր բարոյամարտական որակներով, ինչպես նաև մարտական խնդիրները կատարելու համար հզոր ժամանակակից խոցամիջոցների կիրառման արդյունքների առավելագույն օգտագործման վերաբերյալ ռազմավարության և օպերատիվ արվեստի պահանջներով:

Վճռականությունը դրսևորվում է մարտի նպատակներով և դրանց հասնելու եղանակներով, գորքերի ակտիվ, անձնագոհ գործողություններով, գործելով առավելագույն հաստատակամությամբ և համառությամբ` ցանկացած իրավիճակում մարտական խնդիրը լիովին կատարելու դրանց անկոտրում ձգտմամբ: Ամենավճռական նպատակներին` հակառակորդի լրիվ ջախջախմանը կարելի է հասնել հարձակողական մարտում: Մակայն պաշտպանությունում էլ գորքերը նույնպես կհետապնդեն վճռական նպատակներ` հետ մղել հակառակորդի գերակշռող ուժերի հարձակումը, նրան պատճառել զգալի կորուստներ և ստեղծել հարձակման անցնելու համար բարենպաստ պայմաններ:

Առաջնակարգ մարտական տեխնիկայով գորքերի հանդերձումը, մարտիկների ռազմատեխնիկական պատրաստության բարձր մակարդակը, նրանց կողմից իրենց զինվորական պարտքի խոր ըմբռնողությունն ու գիտակցական կատարումը ապահովում են մարտում ամենավճռական նպատակներին հասնելու իրական հնարավորությունը:

Մարտում վճռական նպատակներին հասնելու համար կարևոր նշանակություն ունի համարձակության, հաստատակամության, գրագետ, առավել նպատակահարմար որոշումն ընդունելու և համառորեն, առանց տատանվելու այն հաղթական ավարտի հասցնելու կարողության ոգով սպայակազմի դաստիարակությունը:

**Ժամանակակից համագորային մարտի քարտե**  
**լարվածությունն ու շարժունակությունը** վճռական նպատակներով և այսպիսի ամենաժամանակակից միջոցների կիրառմամբ ակտիվ մարտական գործողություններ վարելուն մարտին մասնակցող կողմերի ձգտման հետևանք են: Այս գիծն արտահայտում է կարճ ժամկետներում սեփական զորքերի և հակառակորդի զորքերի խմբավորումների որակական և քանակական կազմի, կողմերի ուժերի ու միջոցների հարաբերակցության, ճառագայթումային և քիմիական իրավիճակի էական փոփոխություններով, ռեզերվների արագ մոտեցմամբ, մարտավարական օդադեսանտների իջեցմամբ, մարտական ուղղությունների հանկարծակի հարվածներով, տեղանքի հեռակառավարմամբ ականապատման միջոցների կիրառությամբ և որպես դրա հետևանք մարտ վարելու եղանակների կտրուկ հերթափոխմամբ:

Կարճ ժամանակամիջոցի ընթացքում զանգվածային կորուստների, ավերածությունների հրդեհների անխուսափելիությունը, ռադիոակտիվ վարակման գոտիներում գործելու անհրաժեշտությունը, մարտական գործողությունների շարժունության բարձրացումն ու թափի մեծացումը, իրավիճակի կտրուկ փոփոխությունները կստեղծեն անցած պատերազմներում չտեսնված հսկայական ֆիզիկական և բարոյահոգեբանական ծանրաբեռնվածություն անձնակազմի համար: Այդ պայմաններում մարտում հաղթանակի հասնելը մեր զորքերից կպահանջի բարձր մարտական վարժվածություն, բարոյահոգեբանական և ֆիզիկական պատրաստություն, մարտ վարելու փորձված եղանակներ, անձնակազմի ֆիզիկական և հոգեկան ուժերի առավելագույն լարում, նրա տոկոսություն, խիզախություն և ցանկացած պայմաններում թշնամու նկատմամբ լիակատար հաղթանակի հասնելու պատրաստականություն: Իրավիճակի արագ ու կտրուկ փոփոխությունների պայմաններում զորքերը հաջողությամբ կառավարելու համար հրամանատարներն ու շտաբները պետք է կանխատեսեն մարտի զարգացման ընթացքը, գրագիտորեն արձագանքեն դրա փոփոխություններին, ենթակաների ջանքերը վճռականորեն ուղղորդեն հակառակորդի վերջնական ջախջախմանը:

**Մարտի վերգետնյա - օդային բնույթը** դրա նոր որակն է, որը պայմանավորված է բազմազան թռչող ապարատներով համագորային զորամիավորումների ուժեղացմամբ, ինչը թույլատրում է ջանքերն արագորեն տեղափոխել դեպի խորքը: Այս գիծն առաջացնում է սպաների ու շտաբների կողմից ճակատից, թիկունքից և օդից հակառակորդին միաժամանակյա հարվածներ հասցնելու, ինչպես նաև հակառակորդի այդպիսի հարվածներին ազդելու արվեստին տիրապետելու անհրաժեշտություն:

**Մարտակարգերի կառուցվածքի ամբողջ խորությունը** միաժամանակյա հզոր կրակային ներգործությունը պայմանավորված է կրակամիջոցների աճող հզորությամբ, բոլոր հիմնական զինահամակարգերի մեջ ԳՃԶ-ի ներդրմամբ, ՀՀՀ-

ների և ՀԿՀ-ների ստեղծմամբ: Դա պահանջում է նոր մոտեցում հակառակորդի կրակախոցման պլանավորմանն ու դրա արդյունքների օգտագործումը, հակառակորդի վերգետնյա և օդային ԳՃԶ-ի դեմ պայքարի կազմակերպմանը: Եթե առաջներում զորքերը կարողանում էին միայն դեպքից դեպք կրակով ներգործել խորքում գտնվող՝ դիվիզիաների երկրորդ էշելոնների ու ռեզերվների, դրանց կառավարակետերի և այլ օբյեկտների վրա, ապա այժմ համագորային զորամիավորումները հրթիռահրետանային և ինքնաթիռաուղղաթիռային հարվածներով ընդունակ են այդ խնդիրը լուծել հետևողականորեն, ինչն ստեղծում է տանկային, մոտոհրաձգային զորամասերի և օդադեսանտների կողմից այդ հարվածների արդյունքներն արագորեն օգտագործելու համար, համագորային մարտի շարժունակությունը բարձրացնելու համար բարենպաստ պայմաններ:

**Մ ա ր տ ա կ ա ն խ ն դ ի ր ն ե ր ը կ ա տ ա ր ե լ ու ք ա զ մ ա զ ա ն ե ղ ա ն ա կ ն ե ր ի կ ի ր ա ռ ու թ յ ու ն ը** պայմանավորված է հակառակորդի հարձակումը հետ մղելու (նրան ջախջախելու) և մարտի նպատակներին հասնելու համար ուժերի ու միջոցների կիրառման հնարավոր տարբերակների բազմազանությամբ: Այդ եղանակները կախված են մարտատեսակից, կիրառվող զինատեսակներից, լուծվող խնդիրներից, սեփական զորքերի կազմից և մարտական հնարավորություններից, հակառակորդի գործողությունների բնույթից, տեղանքի, եղանակի պայմաններից և կոնկրետ իրավիճակի այլ պայմաններից: Մարտ վարելու կիրառվող եղանակների բազմազանությունը պայմանավորված է նաև իրավիճակի արագ ու կտրուկ փոփոխություններով, լուծվող խնդիրների բազմազանությամբ, ինչպես նաև մարտական գործողությունների շարժունությամբ և արագահոսությամբ: Քանի որ այդ գործողությունները յուրաքանչյուր մարտում կլինեն տարբեր, ուստի մարտ վարելու եղանակներում (առաջդրած խնդիրները կատարելիս ուժերն ու միջոցները կիրառելու կարգով) չպետք է լինի շաբլոն: Միայն յուրաքանչյուր մարտական խնդրի կատարմանը ստեղծագործական մոտեցումը, դրանք կատարելու նոր, հակառակորդի համար անհայտ եղանակների մշտական կիրառությունը կապահովեն հաջողությունը մարտում:

**Գ ո ր ծ ո ղ ու թ յ ու ն ն ե ր ի մ ի տ ե ս ա կ ն ե ր ի ց մ յ ու ս ն ե ր ի ն ա ր ա զ ա ն ց ու մ ն ու մ ա ր տ ի ա ր ա զ ա հ ո ս ու թ յ ու ն ը** պայմանավորված են ժամանակակից խոցամիջոցների հզորությամբ և արագագործությամբ, բոլոր զինատեսակների հարվածներով դիմակայող հակառակորդին կարճ ժամկետներում վճռականապես խոցելու ընթացքից սրընթացորեն գրոհելու և նրա ջախջախումն ավարտելու, մեծ խորությամբ բարձր տեմպով հաջողությունը զարգացնելու զորքերի ընդունակությամբ: Ժամանակակից մարտում, ինչպես երբեք առաջներում, սուր է ծառանում ժամանակ շահելու և նախաձեռնությունը սեփական ձեռքերում պահելու համար պայքարի, իրավիճակն արագորեն գնահատելու և որոշում ընդունելու, սահմանափակ ժամկետներում ենթակայաներին հստակորեն և հակիրճորեն խնդիրներ առաջադրելու, մարտադաշտում զորամիավորումները,

գորամասերը, ստորաբաժանումները հաստատակամորեն և անընդհատորեն կառավարելու հրամանատարների կարողության մասին հարցը:

**Բ ա թ դ ո ա դ ի ռ է լ ե կ տ ր ո ն ա յ ի ն ի ր ա վ ի ճ ա կ ը** որոշվում է մարտում կիրառվող՝ կողմերի ռադիոէլեկտրոնային միջոցների (ՌԷՄ-երի) կտրուկորեն աճող քանակով: Օրինակ՝ միդ-ի պաշտպանության գոտում կարող է գործել մինչև 2140 սեփական ՌԷՄ և մինչև 4500 հակառակորդի ՌԷՄ, այդ թվում մինչև 120 խանգարումների ռադիոկայաններ: Դրանց զանգվածային անկազմակերպ կիրառությունը կարող է կազմալուծել զորքերի և զենքի կառավարումը, ինչը կտրուկորեն կիջեցնի զորամիավորումների ու զորամասերի մարտական հնարավորությունները, պայքարի ժամանակակից միջոցների կիրառման արդյունավետությունը: Դա չթույլատրելու համար հարկավոր է իմանալ կառավարվող զենքն ու ՌԷՃ-ը կիրառելու հակառակորդի հնարավորությունները, զորքերը կառավարելու նրա համակարգը և կատարել դրանք ճնշելու, ինչպես նաև հակառակորդի այդպիսի հարվածներից սեփական ՌԷՄ-երը պաշտպանելու և դրանց հնարավոր խանգարումները բացառելու նպատակամետ աշխատանք:

Ժամանակակից մարտի բարդ ու լարված բնույթը ներկայացնում է նոր, ավելի բարձր պահանջներ հրամանատարների, շտաբների ու զորքերի մարտավարական պատրաստությունը, ամբողջ սպայակազմից պահանջում է խոր ռազմատեսական գիտելիքներ, նոր հանրագիտական մտահորիզոն, պրոֆեսիոնալ վարպետություն, ստեղծագործություն և նախաձեռնություն մարտում ուժերն ու միջոցները կիրառելու գործում, բարձր կազմակերպվածություն, կատարողականություն և կարգապահություն:

Համագորային մարտում դիվիզիան (գունդը), կախված իրավիճակից, կարող է գործել **երթակարգում, նախամարտակարգում և մարտակարգում:**

**Ե թ թ ա կ ա թ գ ը** շարասյուններով տեղաշարժվելու համար զորամասերի ու ստորաբաժանումների շարժվելն է: Այն պետք է ապահովի շարժման բարձր արագություն և նախամարտակարգով ու մարտակարգով արագ ծավալում. հակառակորդի զանգվածային խոցման զենքից, գերճշգրիտ զենքից և օդուժի հարվածներից նվազագույն խոցելությունը. զորքերի կայուն կառավարման պահպանում: Երթակարգը կիրառում են իրենց ընթացքով զորքերի տեղաշարժման ժամանակ, հարձակումը հաջողությամբ զարգացնելիս և հակառակորդի դիմադրության բացակայության դեպքում, հետապնդման ընթացքում, զորաշարժ իրականացնելիս, ինչպես նաև երկրորդ էշելոնների ու ռեզերվների տեղափոխության ժամանակ:

**Ն ա խ ա մ ա թ տ ա կ ա թ գ ը** մարտակարգի ծավալվելու համար ժամանակ շահելու և հակառակորդի զանգվածային խոցման զենքից, նրա հրետանու կրակից ու օդուժի հարվածներից զորքերի նվազագույն խոցելիության նպատակներով ճակատով ու խորքով մասնատված շարասյուններով զորամասերի ու ստորաբաժանումների շարժվելն է: Այն պետք է ապահովի մարտակարգով զորքերի արագ ծավալում,

առաջխաղացման բարձր տեմպեր, ինչպես նաև արգելափակոցների, վարակման գոտիների, ավերածությունների, հրդեհների ու վարարումների շրջանների արագ հաղթահարում:

**Մ ա ր տ ա կ ա ր գ ը** մարտ վարելու համար զորամասերի ու ստորաբաժանումների զորամասերի ու ստորաբաժանումների շարժվելն է: Այն պետք է համապատասխանի խնդրին, մարտի մտահղացմանն ու ապահովի. մարտի հաջող վարում ինչպես միայն սովորական, այնպես էլ միջուկային զենքի կիրառմամբ. զորամասերի ու ստորաբաժանումների մարտական հնարավորությունների առավել լրիվ օգտագործում. ընտրած ուղղության վրա (շրջանում) ջանքերի ժամանակին կենտրոնացում. մարտական խնդրի ամբողջ խորությամբ վճռական խոցում ու օդից նրա հարվածների հետմղմամբ. հակառակորդի միջուկախոցման ու կրակախոցման արդյունքների և տեղանքի շահավետ պայմանների արագ օգտագործում. կայունություն և ակտիվություն պաշտպանությունում. մարտի ընթացքում հարվածի ուժի աճ և զորաշարժի իրականացում. բոլոր զինատեսակների հարվածներից զորքերի նվազագույն խոցելիություն. անընդհատ փոխգործողության և զորքերի կառավարման հարմարության պահպանում:

#### **4.Ժամանակակից համագորային մարտի սկզբունքները**

Համագորային մարտի սկզբունքները մարտ նախապատրաստելու և վարելու վերաբերյալ հիմնական էլակետային դրույթներն են, կարևորագույն գիտականորեն հիմնավորված և պրակտիկայում ստուգված հանձնարարականները: Դրանք արտահայտում են մարտավարական մասշտաբի մարտական գործողությունների օբյեկտիվորեն գոյություն ունեցող օրինաչափությունների գործնական կիրառման ուղիները:

Համագորային մարտի սկզբունքներն արտացոլում են գտնում կանոնադրություններում, հրահանգներում և այլ պաշտոնական ձեռնարկներում: Մարտ վարելու սկզբունքների իմացությունը հրամանատարներին ու շտաբներին օգնում է նրանց գործնական գործունեության մեջ, նպաստում է զորքերը կառավարելու գործընթացում խելացի նախաձեռնության և ստեղծագործության լայն դրսևորմանը:

Զինված պայքարի նոր միջոցներն էական ազդեցություն են ունենում ժամանակակից համագորային մարտի սկզբունքների վրա: Այսպես, գերձգրիտ զենքի ներդրումը պահանջում է զորամիավորումներն ու զորամասերը մարտական պատրաստականության բերելու նոր մացույցների փոփոխություն, բարձրացում է հանկարծակիության, մարտում հստակ ու անընդհատ փոխգործողության նշանակությունը, հարկադրում է նորովի լուծել պաշտպանությունում և հարձակման



ժամանակ ջանքերի կենտրոնացման, գորքերի կառավարման և դրանց բազմակողմանի ապահովման հիմնահարցերը:

**Ժամանակակից համագորային մարտի հիմնական սկզբունքներն են.** գորամիավորումների, գորամասերի ու ստորաբաժանումների մշտական մարտական պատրաստականությունը. մարտի վարման վճռականությունը, ակտիվությունն ու անընդհատությունը. գորատեսակների ու հատուկ գորքերի գորամասերի ու ստորաբաժանումների համաձայնեցված կիրառությունը, դրանց միջև անընդհատ փոխգործողության պահպանումը. գործողությունների հանկարծակիությունն ու ռազմական խորամանկություն կիրառելու (հակառակորդին խաբելը). գլխավոր ուղղության վրա և վճռական պահին ջանքերի կենտրոնացումը. գորամասերով ու ստորաբաժանումներով, հարվածներով ու կրակով կատարվող գորաշարժը. գորամասերի (ստորաբաժանումների) մարտունակության ժամանակին վերականգնումը. մարտի բազմակողմանի ապահովումը. ի շահ առաջադրած խնդրի կատարման բարոյական ու ֆիզիկական ուժերի լրիվ լարումը բարոյահոգեբանական գործոնի օգտագործումը. գորքերի հաստատակամ ու անընդհատ կառավարումը:

**Ձ ո ր ա մ ա ի վ ո ր ու մ ն ե ր ի ,                      գ ո ր ա մ ա ս ե ր ի                      ու ս տ ո ր ա բ ա ժ ա ն ու մ ն ե ր ի                      մ շ տ ա կ ա ն                      մ ա ր տ ա կ ա ն պ ա տ ր ա ս տ ա կ ա ն ու թ յ ո ն ւ ը** նշանակում է իրավիճակի ցանկացած պայմաններում կազմակերպված, սահմանված ժամկետներում ծավալվելու, մարտական գործողություններ սկսելու և առաջադրած մարտական խնդիրները հաջողությամբ կատարելու դրանց ընդունակությունը:

Դա ձեռք են բերում. հրամանատարների, շտաբների ու ծառայությունների կողմից իրենց խնդիրների ճիշտ ըմբռնմամբ, իրավիճակում հնարավոր փոփոխությունների կանխատեսմամբ և առաջիկա գործողությունների պլանավորման ու նախապատրաստման անհրաժեշտ միջոցառումների ժամանակին անցկացմամբ. մարտ վարելու համար անհրաժեշտ ամեն ինչով գորքերի համալրվածությամբ ու ապահովվածությամբ. հրամանատարների, շտաբների ու գորքերի բարձր մարտական վարժվածությամբ. կիրառությունը զենքի ու մարտական տեխնիկայի, առաջադրած խնդիրների լուծմանը անձնակազմի մշտական պատրաստականությամբ. նշանակության հաշվառմամբ գորամիավորումների, գորամասերի ու ստորաբաժանումների տեղաբաշխմամբ և դրանց բարձր գորահավաքային պատրաստականությամբ. հետախուզության անընդհատ վարմամբ. մարտական հետախուզության և մարտական ծառայության հստակ կազմակերպմամբ և զգոն կրմամբ. մարտական պատրաստականության բարձրագույն աստիճանների գորքերի ժամանակին ու կազմակերպված բերմամբ. անձնակազմի բարձր բարոյահոգեբանական վիճակով, կարգապահությամբ ու զգոնությամբ. գորքերի հաստատակամ ու անընդհատ կառավարման կազմակերպմամբ ու պահպանմամբ:

Մեր ռազմական հայեցակարգի պաշտպանողական ուղղվածությունն ավելի բարձր պահանջներ է ներկայացնում զորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների մարտական պատրաստականության բոլոր տարրերին, հատկապես հրամանատարների, շտաբների ու զորքերի մարտական վարժվածության մակարդակին, անձնակազմի կազմակերպվածությանն ու կարգավարժվածությանը, ռազմական հայեցակարգի դրույթների ճիշտ ըմբռնմանը: Զորքերը պետք է պատրաստ լինեն պաշտպանողական գործողություններ վարելու ճանապարհով, ինչպես նաև պատերազմ սկսելու և վարելու ցանկացած պայմաններում ինչպես պաշտպանությունում, այնպես էլ հարձակման ժամանակ գործելով առավելագույն վճռականությամբ՝ թշնամուն խորտակիչ պատասխան հարվածներ հասցնելու ճանապարհով նախահարձակումը հետ մղելուն:

Մարտի վարման **վ ճ ռ ա կ ա ն ու թ յ ու ն ը , ա կ տ ի վ ու թ յ ու ն ն ու ա ն ը ն դ հ ա տ ու թ յ ու ն ը** հակառակորդին լիովին ջախջախելուն մշտական ձգտումն է: Դա ձեռք են բերում հակառակորդին ճանաչելով, նրան սեփական կամքը պարտադրելով, նախաձեռնությունը խլելով և պահելով, նրա պլանները խափանելով:

Մարտում վճռականությունն ու ակտիվությունը ձեռք են բերում համարձակությամբ, հանդգնությամբ, հաստատականությամբ, համառությամբ, իսկ անընդհատությունը՝ ցերեկն ու գիշերը, ցանկացած եղանակին մարտ վարելով: Այս սկզբունքի գործնական իրականացումն ապահովում են ընտրած ուղղությունների վրա ռեզերվների առկայությամբ և ջանքերի ժամանակին կուտակմամբ, զորքերի մարտունակության արագ վերականգնմամբ, մի մարտատեսակից մյուսին, ինչպես նաև միայն սովորական զենքի կիրառմամբ գործողություններից միջուկային զենքի օգտագործմամբ գործողություններին հմուտ անցմամբ: Մարտական գործողությունների վարման անընդհատությունն ապահովում են նաև հրթիռների, զինամթերքների, վառելանյութի և այլ նյութական միջոցների ժամանակին համալրմամբ, վնասված սպառազինության ու տեխնիկայի ժամանակին տեխնիկական սպասարկմամբ, արագ նորոգմամբ և շարք վերադարձմամբ:

Մարտի վարման վճռականությունը, ակտիվությունն ու անընդհատությունը կոնկրետ դրսևորում են գտնում ամենից առաջ հակառակորդի ավելի խոր, քան առաջնեղում, կրակախոցման, գետնի վրա և օդում գորաշարժի լայն կիրառման, այդպիսի գործողություններում հակառակորդից առաջ ընկնելու, մարտական խնդիրների կատարման ոչ ստանդարտ եղանակների կիրառմամբ մարտի անընդհատ վարման գործում. իրավիճակի բոլոր շահավետ պայմանների, ժամանակին օգտագործման, սեփական զորքերի մարտական հնարավորությունների, ինչպես նաև հակառակորդի սխալների ու վրիպումների ժամանակին օգտագործման գործում՝ նրան վճռականորեն ջախջախելու համար: Հակառակորդին ջախջախելու որոշումը պետք է լինի հաստատ: Այն պետք է անսասանորեն հասցնել մինչև վերջ: Հրամանատարը պարտավոր է այդ վճռականությունը ներշնչել իր ենթականերին և մշտապես նրանց պատրաստել

մարտական խնդիրների հաջող կատարմանը: Անվճռականությունն ու պասիվությունը հանգեցնում են պարտության: Ամենախիստ կշտամբանքի արժանի է ամենից առաջ նա, ով, վախենալով պատասխանատվությունից, ցուցաբերել է անգործություն և չի օգտագործել բոլոր ուժերը, միջոցներն ու հնարավորությունները հաջողության հասնելու համար:

**Ջ ո ռ ա տ է ս ա կ ն է ը ի ու հ ա տ ու կ գ ո ը ք է ը ի**  
**գ ո ը ա մ ա ս է ը ի ու ս տ ո ը ա ք ա ժ ա ն ու մ ն է ը ի**  
**հ ա մ ա ձ ա յ ն է ց վ ա ծ կ ի ը ա ռ ու թ յ ու ն ը և դ ը ա ն ց ա ն ը ն դ հ ա տ**  
**փ ո խ գ ո ը ծ ո ղ ու թ յ ա ն պ ա հ պ ա ն ու մ ը :** Ժամանակակից

համագործային մարտում հաղթանակի կարելի է հասնել միայն դրան մասնակցող բոլոր ուժերի ու միջոցների համատեղ ջանքերով: Դրա համար պահանջում են մարտին մասնակցող զորամասերի ու ստորաբաժանումների միջև անընդհատ փոխգործողության կազմակերպում ու պահպանում:

Փոխգործողության էությունը բոլոր զորատեսակների ու հատուկ զորքերի զորամասերի (ստորաբաժանումների) համաձայնեցված գործողություններն են միամյանց հետ, ինչպես նաև ի շահ մոտոհրաձգային ու տանկային զորամասերի (ստորաբաժանումների) կողմից մարտական խնդիրների առավել հաջող կատարման ըստ խնդիրների, ուղղությունների, բնագծերի, ժամանակի և առաջդրած խնդիրները կատարելու եղանակների հակառակորդի կրակախոցման ու միջուկախոցման հետ: Փոխգործողությունն իրագործում են անընդհատորեն ամբողջ մարտի ընթացքում, իսկ խախտվելու դեպքում անհապաղ վերականգնում են:

Փոխգործողության անընդհատությունը ձեռք են բերում. հրամանատարների ու շտաբների կողմից մարտի նպատակի, մարտական խնդիրների և դրանք կատարելու եղանակների ճիշտ ըմբռնմամբ. իրավիճակի մշտական իմացությամբ. փոխգործակցող զորամասերի (ստորաբաժանումների) հրամանատարների ու շտաբների հետևադական փոխտեղեկատվությամբ. խախտված փոխգործողությունը վերականգնելու գործում հրամանատարների ու շտաբների լայն նախաձեռնությամբ. հրամանատարի տրամադրության տակ մարտի ընթացքի վրա ազդեցությունն ու խախտված փոխգործողության արագ վերականգնումը ապահովող ուժերի ու միջոցների առկայությամբ. անխափան գործող կապի առկայությամբ:

Զինված պայքարի նոր միջոցների կիրառությունն էապես փոխում է փոխգործողության բովանդակությունն ու դրան ներկայացվող պահանջները, քանի որ խոր կրակախոցումը բարդացնում է դրա արդյունքներն օգտագործելու և հակառակորդի ԳՃԶ-ից սեփական զորքերը պաշտպանելու գործում ուժերի ու միջոցների փոխգործողության կազմակերպումը, իսկ մարտում օդուժի և օդա-դեսանտների լայն կիրառությունը՝ ճակատից հարձակվող զորքերի դեմ դրանց գործողությունները համաձայնեցնելու գործում: Զգալիորեն ավելի բարդ են լուծվում ՌԷՃ միջոցներ կիրառելու պայմաններում կայուն կառավարումը պահպանելու հարցերը:

**Գ ո ը ծ ո ղ ո լ թ յ ո լ ն ն ե թ ի հ ա ն կ ա թ ա կ ի ո լ թ յ ո լ ն ն ո լ**  
**ն ա զ մ ա կ ա ն խ ո թ ա մ ա ն կ ո լ թ յ ո լ ն կ ի թ ա ո ե լ ը ( հ ա կ ա ո ա -**  
**կ ո թ դ ի ն խ ա ք ե լ ը )** վաղուց ի վեր ռազմարվեստի կարևարագույն  
սկզբունքներից են: Ժամանակակից պայմաններում հանկարծակիության դերն էլ  
ավելի է աճում: Հանկարծակիությունը թույլատրվում է հակառակորդին անակնկալ  
վրա հասնել, խուճապ առաջացնել նրա շարքերում, ջլատել նրա դիմադրության  
կամքը, կտրուկորեն իջեցնել մարտունակությունը, կազմալուծել զորքերի  
կառավարումն ու ստեղծել նույնիսկ ուժով գերակշռող հակառակորդի նկատմամբ  
հաղթանակի հասնելու համար բարենպաստ պայմաններ:

Հանկարծակիությունը ձեռք են բերում. առաջիկա մարտի մտահղացումը  
գաղտնի պահելով և դրան գաղտնաբար նախապատրաստվելով. հակառակորդին իր  
մտադրություններում մոլորության մեջ զցելով. խոցամիջոցների, հատկապես  
ամենահզոր ու ճշգրիտ խոցամիջոցների անսպասելի կիրառմամբ. հարված  
հասցնելով այնտեղ, որտեղ հակառակորդն ամենից քիչ է սպասում մեր զորքերի  
վճռական գործողություններին. գործողություններում հակառակորդից առաջ  
ընկնելով. առաջադրած խնդիրները սրբնթացորեն ու արագորեն կատարելով. մարտ  
վարելու հակառակորդին անհայտ եղանակներ և պայքարի նոր միջոցներ  
կիրառելով. գիշերը մարտ վարելով. վարպետորեն քողարկում և հակառակորդի  
հետախուզությունը հակադրելու միջոցառումներ իրագործելով. զորքերի գաղտնի  
կառավարման, կապի անվտանգության և գաղտնիության ռեժիմի պահանջների  
խիստ կատարմամբ:

Հանկարծակիության կձգտի նաև հակառակորդը: Ուստի անհրաժեշտ են  
ակտիվ ու անընդհատ հետախուզություն, նրա մտադրությունների ու հնարավոր  
գործողությունների կանխատեսում, ամբողջ անձնակազմի բարձր զգոնություն,  
մարտական հերթապահության հստակ կրում, հակառակորդի հանկարծակի  
գործողությունները տապալելու և հետ մղելու զորքերի մշտական մարտական  
պատրաստակություն:

Ռազմական խորամանկությունը (հակառակորդին խաբելը) իրագործում են  
դիվիզիայի (գնդի) իսկական վիճակի և գործողությունների նկատմամբ  
հակառակորդին մոլորության մեջ զցելու ճանապարհով: Հակառակորդին խաբելու  
եղանակները կախված են ստեղծված իրավիճակից, առաջադրած մարտական  
խնդրից, խիստ քողարկման պայմաններում վճռական ու ոչ շաբլոն  
գործողություններին զորամասերի (ստորաբաժանումների) պատրաստ լինելու  
աստիճանից, ինչպես նաև եղանակի վիճակից, տարվա եղանակից ու օրվա  
ժամանակից: Խաբուսիկ գործողությունները պետք է լինեն պարզ մտահղացմամբ ու  
կատարմամբ, դրանք պետք է կազմակերպել գաղտնաբար, կատարել համոզորեն ու  
ժամանակին:

**Գ լ խ ա վ ո թ ո լ ղ ո լ թ յ ա ն վ թ ա և վ ճ ո ա կ ա ն պ ա հ ի ն**  
**հ ի մ ն ա կ ա ն ջ ա ն ք ե թ ի վ ճ ո ա կ ա ն կ ե ն տ թ ո ն ա ց ո լ մ ը**

թույլատրում է հակառակորդի նկատմամբ հասնել գերակշռության, հաջողությամբ դիմակայել նրա թվապես գերակշռող ուժերին, առավել արդյունավետորեն օգտագործել զորքերը, ուժերն ու միջոցները, հակառակորդին դնել ոչ շահավետ պայմանների մեջ:

Մարտական փորձը սովորեցնում է, որ հակառակորդի նկատմամբ հաղթանակի հասնելու համար պետք չի սեփական ջանքերը բաշխել հավասարաչափորեն ամբողջ ճակատով: Անհնար և աննպատակահարմար է հակառակորդի նկատմամբ գերակշռություն ունենալ ճակատի բոլոր տեղամասերում: Բավական է հակառակորդին հասցնել խորտակիչ հարված խոցելի տեղում, և հաջողությունն ապահովված կլինի ամբողջ ճակատով:

Այդ դրույթը կարմիր թելով անցնում է մեր բոլոր կանոնադրություններում ու հրահանգներում և հիմնադիր է մարտավարությունում, օպերատիվ արվեստում ու ռազմավարությունում:

Մակայն զինված պայքարի նոր միջոցներ կիրառելու պայմաններում ճակատի համեմատաբար նեղ տեղամասերում զորքերի խոշոր զանգվածների նախօրոք կատարված ծավալումը նույնիսկ միայն սովորական զենք կիրառելու պայմաններում կարող է հանգեցնել ծանր հետևանքների: Մեծ խորությամբ կրակահարվածներ հասցնելու զգալիորեն աճող ճշգրտությունը թույլատրում է բարձր արդյունավետությամբ լուծել աճող ծավալով խնդիրները ուժերի, միջոցների ու ժամանակի փոքր ծախսի դեպքում: Դա կանխորոշում է ինչպես հարձակման ժամանակ, այնպես էլ պաշտպանությունում ուժերն ու միջոցները կենտրոնացնելու եղանակները փոփոխելու անհրաժեշտությունը: Ժամանակակից խոցամիջոցների մեծ հեռահատությունը տալիս է ճակատով ու խորքով այդ ուժերի ու միջոցների ապակենտրոնացված տեղաբաշխման դեպքում հզոր ու ճշգրիտ կրակահարվածներ հասցնելու հնարավորություն, իսկ զորքերի լրիվ մոտորացումը, մարտավարական օդադեսանտների լայն կիրառությունը ապահովում են ջանքերի արագ կենտրոնացումը նույնիսկ ուժերի ու միջոցների զգալի ապակենտրոնացման դեպքում:

Ջանքերի կենտրոնացումը ձեռք են բերում. ըստ խնդիրների և գործողությունների ուղղությունների զորքերի, ուժերի ու միջոցների հմուտ բաշխմամբ. գլխավոր ուղղության վրա ուժերի ու միջոցների, առավել մարտունակ զորամասերի (ստորաբաժանումների) ու արդյունավետ խոցամիջոցների մեծ մասի օգտագործմամբ. զանազան զինատեսակների վարպետ կիրառմամբ, մարտի ընթացքում ուժերի ու միջոցների համարձակ գորաշարժով:

**Զ ո Ր Ա մ ա ս ե թ ի ու ս տ ո Ր ա ր ա ժ ա ն ու մ ն ե թ ի ,**  
**հ ա ր վ ա ծ ն ե թ ի ու կ ր ա կ ի գ ո Ր ա շ ա ր ժ ր :** Ժամանակակից մարտում հաջողության հասնելու համար զորամասերն ու ստորաբաժանումները պետք է համարձակորեն, վճռականորեն ու ժամանակին իրագործեն ուժերի ու միջոցների գորաշարժ: Այս սկզբունքի գործնական կիրառությունը թույլատրում է խզել ու պահել

նախաձեռնությունը գործողություններում, տապալել հակառակորդի մտահղացումները, ստեղծել գերակշռություն նրա նկատմամբ և այն պահպանել զլիսավոր ուղղությունների վրա, հաջողությամբ մարտ վարել փոխված իրավիճակում, հասնել մարտի նպատակին ավելի կարճ ժամկետներում ու փոքր կորուստներով, մասերով լիովին ջախջախել հակառակորդի գերակշռող ուժերը:

Ջորամասերի ու ստորաբաժանումների զորաշարժն իրագործում են դեպի հակառակորդի մարտակարգի խորքը, ինչպես նաև այն գրավելու կամ շրջանցելու, այդ թվում օդով, տարբեր ուղղություններից հակառակորդի թևին ու թիկունքին վճռական ու հանկարծակի հարվածներ հասցնելու համար դրանց սրընթաց առաջխաղացմամբ. զորաշարժն իրագործում են նաև հակառակորդի հարվածների տակից սեփական զորքերը դուրս հանելու նպատակով: Ջորաշարժի հիմքում պետք է դրված լինի հակառակորդի կրակախոցման ու միջուկախոցման արդյունքների ժամանակակից ու առավել լրիվ օգտագործումը:

Ջորամասերի ու ստորաբաժանումների զորաշարժի տեսակներից են թևանցումը, շրջանցումը, դրանց զուգակցումն ու նահանջը:

Թևանցումը հակառակորդի թևին հարվածելու համար դուրս գալու նպատակով զորամասերի (ստորաբաժանումների) կողմից իրագործվող զորաշարժն է: Այն կատարում են ճակատից գործող զորամասերի (ստորաբաժանումների) հետ սերտ մարտավարական ու կրակային փոխգործողությամբ: Ժամանակակից պայմաններում մեծ նշանակություն է ձեռք բերում ճակատից գործող զորամասերի ու ստորաբաժանումների հետ մարտավարական, իսկ երբեմն էլ կրակային փոխգործողությամբ ցամաքային զորքերի օդադեսանտների և օդուծի կողմից համագորային մարտում իրագործել օդով թևանցումը:

Շրջանցումը թիկունքից հակառակորդին հարվածելու համար զորամասի ու ստորաբաժանումների կողմից կատարվող ավելի խոր զորաշարժն է: Այն կատարում են ճակատից հարձակվող զորքերի հետ մարտավարական փոխգործողությամբ: Ամենամեծ հաջողությանը կարելի է հասնել հակառակորդի երկու թևերը թևանցելու կամ շրջանցելու և նրա թիկունք դուրս գալու (իջնելու) դեպքում:

Նահանջն այն դեպքերում կիրառվող զորաշարժն է, երբ միայն տարածքի մի մասի ժամանակավոր կորստի ճանապարհով է հնարավոր փոխել անբարենպաստորեն ստեղծվող իրավիճակը, սեփական զորքերը դուրս բերել հակառակորդի հարվածների տակից, ժամանակ շահել և զբաղեցնել ավելի շահավետ բնագծեր: Նահանջը կատարում են միայն ավագ պետի թույլտվությամբ կամ հրամանով:

Ջորամասերի ու ստորաբաժանումների զորաշարժը պետք է լինի մտահղացմամբ պարզ: Այն պետք է կատարել արագորեն, գաղտնաբար ու հակառակորդի համար հանկարծակիորեն: Ջորաշարժի արագությունը ձեռք են բերում ամենից առաջ տեղաշարժման սրընթացությամբ, ընթացքից զանազան արգելքներ հաղթահարելով, զորքերը, մարտական տեխնիկան, սպառազինությունը,

զինամթերքներն ու այլ նյութական միջոցները տեղափոխելու համար ուղղաթիռներ ու տրանսպորտային ինքնաթիռներ օգտագործելով, ինչպես նաև կարճ ժամկետներում այն կազմակերպելով:

Հարվածների և կրակի գորաշարժը հակառակորդի կարևորագույն օբյեկտների վրա դրանց միաժամանկյա կամ հաջորդական կենտրոնացումն է կամ բաշխումը (ապակենտրոնացումը) մի քանի օբյեկտներ խոցելու համար, ինչպես նաև նոր օբյեկտների վրա դրանց վերանշանառումը:

**Ջ ո ռ ա մ ա ս ե ռ ի ( ս տ ռ ա ք ա ժ ա ն ու մ ն ե ռ ի )**  
**մ ա ր տ ու ն ա կ ու թ յ ա ն ժ ա մ ա ն ա կ ի ն վ ե ր ա կ ա ն գ ն ու մ ը ,**  
**մ ա ր տ ի ք ա զ մ ա կ ո ղ մ ա ն ի ա պ ա հ ո վ ու մ ը :** Մարտում միջուկային զենքի ու համազարկային կրակի համակարգերի, ծավալային պայթյունի և անհատական նշանառմամբ զինամթերքների, հետախուզական-հարվածային համալիրների կիրառությունն ստեղծում է նախադրյալներ սահմանափակ ժամկետներում մարտական ստորաբաժանումներին մեծ կորուստներ պատճառելու համար, ինչպես նաև կառավարման ու ապահովման համակարգերը խախտելու համար, հանգեցնում է մարտունակության կորստյան: Ուստի զորամասերի ու ստորաբաժանումների մարտունակությունը ժամանակին վերականգնելը դարձել է այն կարևորագույն խնդիրներից մեկը, որոնց լուծումից շատ բաներով կախված է զորքերի գործողությունների հաջողությունը: Ջորքերի մարտունակությունը ժամանակին վերականգնելը դրանց կենսունակությունը, հակառակորդի կրակամիջոցների ու միջուկամիջոցների հատվածներին դիմակայելու, ստորաբաժանումների ու զորամասերի մարտունակությունը պահպանելու և արագորեն վերականգնելու ընդունակությունը ապահովելու մի շարք միջոցառումներ կազմակերպելն ու անցկացնելն է:

Մեկական զորքերի մարտունակության պահպանումը նշանակում է մարտի ընթացքում դրա պահպանում այնպիսի մակարդակի վրա, որն ապահովում է առաջադրած խնդիրների հաջող կատարումը: Այդ նպատակով տվյալ սկզբունքը պահանջում է. անհապաղ ոչնչացնել հակառակորդի միջուկային ու քիմիական հարձակման բացահայտված միջոցները, ինչպես նաև գերձզգրիտ զենքի համակարգերի օբյեկտները. վարպետորեն կատարել մարտական խնդիրները անձնակազմի, զենքի ու ռազմական տեխնիկայի նվազագույն կորուստներով. զորամասերն ու ստորաբաժանումները հուսալիորեն պաշտպանել օդից հակառակորդի հարվածներից. արագորեն վերականգնել հառառակորդի հարվածների արդյունքում ժամանակավորապես շարքից դուրս եկած տեխնիկական ու սպառազինությունը:

Ջորքերի մարտունակության ժամանակին վերականգնումը ներառում է. խախտված կառավարման վերականգնումը. կորուստների բացահայտումն ու մարտունակությունը պահպանած զորամասերին (ստորաբաժանումներին), ինչպես նաև այն շրջանները պաշտպանելու համար առանձնացրած զորամասերին (ստոր-

քաբաժանումներին) առաջադրվող՝ մարտը շարունակելու խնդիրների ճշտումը, որոնցում վերականգնում են զորքերի մարտունակությունը. մարտունակությունը կորցրած զորամասերի (ստորաբաժանումների) դուրսբերումը անվտանգ շրջաններ, վնասված սպառազինության ու տեխնիկայի վերականգնումը, անձնակազմով, սպառազինությամբ, տեխնիկայով և այլ նյութական միջոցներով համալրումը, անձնակազմի բարձր բարոյական վիճակի ու հոգեբանական տոկունության պահպանումը: Առաջին հերթին վերականգնում են մարտական խնդրի կատարումը շարունակող, ինչպես նաև նվազագույն կորուստներ կրած զորամասերի (ստորաբաժանումների) մարտունակությունը: Դա պետք է կատարել ակտիվ գործողություններին անցնելու մեջ հակառակորդից առաջ ընկնելն ապահովող ժամկետներում:

Զորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների գործողությունները պետք է բազմակողմանիորեն ապահովել բարձրմարտական պատրաստականությունը պահպանելուն, մարտունակությունը պահպանելուն և դրանց առաջդրած խնդիրները կատարելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելուն ուղղված միջոցառումները կազմակերպելու և իրագործելու ճանապարհով:

Ժամանակակից մարտի բազմակողմանի ապահովումը լինում է մարտական, տեխնիկական ու թիկունքային: Այն կազմակերպում են հրամանատարի որոշման հիման վրա բոլոր մարտատեսակներում, ինչպես նաև տեղաբաշխվելիս և զորամասերը (ստորաբաժանումները) տեղում տեղաբաշխելիս: Այն իրագործում են բոլոր զորատեսակները, իսկ անձնակազմի հատուկ պատրաստություն և հատուկ տեխնիկայի կիրառություն պահանջող առավել բարդ միջոցառումները՝ հատուկ զորքերի ու թիկունքի համապատասխան զորամասերն ու ստորաբաժանումները: Մարտի ապահովման կազմակերպումն ու իրագործումը հրամանատարների, շտաբների, զորատեսակների ու ծառայությունների պետերի հիմնական պարտականություններից են: Նրանց կողմից անցկացվող՝ բազմակողմանի ապահովման միջոցառումները պետք է համապատասխանեն մարտի մտահղացմանն ու նախատեսեն վճռական ուղղության վրա (շրջանում) հիմնական ջանքերի կենտրոնացում, ինչպես նաև սեփական ուժերով ու միջոցներով և նյութական պաշարներով ճկուն զորաշարժի հնարավորություն՝ կախված ստեղծված իրավիճակից:

Միջուկային զենքի հնարավոր կիրառման ԳՃԶ-ի արդյունավետության, մարտական գործողությունների վերգետնյա-օդային բնույթի կտրուկ բարձրացման պայմաններում էլ ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում զորքերի պաշտպանությունը (անվտանգության ապահովումը): Բոլոր զորատեսակների, հատուկ զորքերի ու թիկունքի զորամասերն ու ստորաբաժանումները, բացի դրանից, պետք է գտնվեն հակառակորդի օդաշարժ, դիվերսիոն- հետախուզական խմբերի և



այլ շարժական ուժերի հարվածները հետ մղելու մշտական պատրաստականության մեջ:

**Բարոյական ու ֆիզիկական ուժերի լրիվ լարումը, բարոյահոգեբանական գործոնի օգտագործումը ի շահ մարտական խնդիրներին կատարման:** Այս գործոնները խոր ներգործություն են ունենում զորքերի անձնակազմի գործունեության, հրամանատարների որոշման բոլոր կողմերի, զորամիավորման, զորամասի, ստորաբաժանման գործողությունների ընթացքի ու էլքի և առաջադրած մարտական խնդրի կատարման հաջողության վրա: Մարդը միշտ էլ եղել և մնում է գլխավոր ուժը մարտում:

Այս ամենը հրամանատարներից ու շտաբներից պահանջում է ենթակա զորամասերի ու ստորաբաժանումների անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի, դրա ամրապնդման ակտիվ դաստիարակչական աշխատանքի կազմակերպման ու կատարման մշտական խոր իմացություն. ենթակաների կարիքների նկատմամբ ուշադրության հետ նրանց ներկայավող բարձր պահանջկոտության, մարտական իրավիճակում կյանքի դժվարությունների հաշվառման զուգակցում. հակառակորդի բարոյահոգեբանական որակների հետևողական ուսումնասիրում, նրա ուժեղ և թույլ կողմերի բացահայտում, նրա գաղափարախոսական դիվերսիաներին ու պրոպագանդային ակտիվ հակազդեցություն. հակառակորդի զորքերի ու բնակչության վրա նպատակաուղղված գաղափարախոսական և հոգեբանական ներգործություն:


**Զորքերի կայուն և անընդհատ կառավարումը** թույլատրում է առավել արդյունավետորեն ու լիովին օգտագործել դրանց մարտական հնարավորությունները՝ առաջադրած խնդիրները լուծելու համար: Դրան հասնում են. իրավիճակի մշտական իմացությամբ, որոշումների ժամանակին ընդունմամբ և դրանց հաստատակամ կենսագործմամբ. իրենց որոշումների, իրենց ենթակա զորքերի ճիշտ օգտագործման և առաջադրած խնդիրների կատարման արդյունքների համար բոլոր աստիճանների հրամանատարների ու պետերի անձնական պատասխանատվությամբ. կառավարակետերի ճիշտ կազմակերպմամբ, ժամանակին տեղափոխությամբ և կենսունակության ապահովմամբ. զորքերի հետ կայուն կապի առկայությամբ:

Զորքերի կայուն ու անընդհատ կառավարումը թույլատրում է առավել արդյունավետորեն ու լիովին օգտագործել դրանց մարտական հնարավորությունները՝ առաջադրած խնդիրները լուծելու համար: Դրան հասնում են. իրավիճակի մշտական իմացությամբ, որոշումների ժամանակին ընդունմամբ և դրանց հաստատակամ կենսագործմամբ. իրենց որոշումների, իրենց ենթակա զորքերի ճիշտ օգտագործման և առաջադրած խնդիրների կատարման արդյունքների համար բոլոր աստիճանների հրամանատարների ու պետերի անձնական պատասխանատվությամբ. կառավարակետերի ճիշտ կազմակերպմամբ, ժամանակին տեղափոխությամբ և կենսունակության ապահովմամբ. զորքերի հետ կայուն կապի առկայությամբ:





102 Գ-ի ՀԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԵԼՄԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՁԲԱՂԵՑՈՒՄԸ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԵՏ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՇՓՄԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ



## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Զորքերի մարտական պատրաստության փորձը ցույց է տալիս, որ դիվիզիայի (գնդի) պաշտպանության մարտավարության հիմնադրույթներն ամբողջությամբ կիրառելի են մոտոհրաձգային և տանկային բրիգադների գործողությունների նկատմամբ: Տարբերությունը միայն դրանց մարտական հնարավորություններից կախված նորմատիվային ցուցումների մեջ է, որոնց համար տվյալները բերված են հավելվածում:

Համագորային զորամիավորումների ու զորամասերի մարտավարության մյուս հարցերը՝ հարձակումը, այդ թվում հանդիպական մարտը, շրջապատման մեջ մարտն ու շրջապատումից դուրս գալը, զորքերի տեղաշարժումն ու տեղում դրանց տեղաբաշխումը, շարադրված են «Համագորային զորամիավորումների ու զորամասերի մարտավարություն: Դիվիզիայի (գնդի) հարձակումը գրքում:

Դասագիրքը նախատեսված է ցամաքային զորքերի ռազմական սկադեմիաներում ուսանող զինծառայողների և ունկնդիրների համար, այն կարելի է օգտագործել նաև զինված ուժերի այլ տեսակների սպաների մարտավարական պատրաստության համար:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ I Մ Ա Ս (դիվիզիա, բրիգադ, գունդ). Երևան 2006
2. ՀԱՄԱԶՈՐԱՅԻՆ ԶՈՐԱՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ: ԴԻՎԻԶԻԱՅԻ (ԳՆԴԻ) ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Երևան 2008